

ՄԱՐԶԻԿ
ՀԱՇՎ

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

32րդ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 1 (367) - VOL. XXXII N° 1

السنة الثانية والثلاثون - العدد رقم 1

Հ.Ա.Ե.Մ.

95

1918-2013

ԲԱՐՁՐԱՑԻՐ

ԲԱՐՁՐԱՑՈՒՐ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ 27 ՅՈՒԼԻՍ-3 ՕԳՈՍՏՈՍԻՆ, ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8-րդ մարզախաղերին չորս տարի ետք, այս ամառ, մարզախաղերուն 9-րդ տեղի կ'ունենայ Երեւանի մէջ, տասնօրեայ յայտագիրով եւ 8 մարզաձեւերով: Առաջին անգամ ըլլալով, թեմիսը նկատի կ'առնուի մարզաձեւերու շարքին:

Մարզախաղերը ընթացք կ'առնեն 27 Յուլիսին, բացման մեծաշուք հանդիսութեամբ եւ կ'երկարին մինչեւ 3 Օգոստոս: Յայտագիրի վրայ նախատեսուած է մասնակիցներու Սեւանայ լիճ եւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելութիւն: Նախատեսուած է նաեւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդես, մարզախաղերու փակման հանդիսութենէն ետք:

Բաժակներու եւ մետալներու տիրացման մրր-



ցակցութիւնը կը կեդրոնանայ հետեւեալ մարզաձեւերուն շուրջ.-

- Ֆութպոլ- երեք եւ կրտսեր տղաք
- Պասքեթպոլ- երեք եւ կրտսեր տղաք ու աղջիկներ
- Վոլիպոլ- աղջիկներ
- Ճատրակ- տղաք ու աղջիկներ
- Փինկ-փոնկ- տղաք ու աղջիկներ
- Թենիս- տղաք ու աղջիկներ
- Աթլէթ- տղաք ու աղջիկներ
- Լող- տղաք ու աղջիկներ

Իբրեւ կրտսեր նկատի առնուած են 18 տարեկանէն վար տարիքի մարզիկներ (1995-ի ծնունդներ): Այլապէս, տարիքային որեւէ սահմանափակում չէ կատարուած մարզախաղերու մասնակցութեան համար: Մասնակցութեան միակ պայման ճշդուած է մարզիկներու արհեստավարժ չըլլալը:

ԵՌԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԻՉԵՒ

12 Փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի կեդրոնական գրասենեակին մէջ ստորագրուեցաւ եռակողմանի գործակցութեան համաձայնագիր մը` Հայաստանի կրթութեան, աշխատանքի ու ընկերային հարցերու նախարարութիւններուն եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան միջեւ:

Համաձայնագիրը կը վերաբերի «Անապահով երեխաներու կազմակերպման ու ներգրաւման» եւ կ'առաջադրէ մէկ տարուան ընթացքին 12-18 տարեկան 700 անապահով



երեխաներ, մեծ մասամբ գիշերօթիկ հաստատութիւններու, մանկատուններու եւ հանրակրթական դպրոցներու սաներ, մասնակից դարձնել սկաուտական աշխատանքներու, զանոնք հեռու պահե-

լու համար ընկերային սայթաքումներէ եւ յոռի վարք ու բարքէ: Կը նախատեսուի, որ 2014-ին 700 երեխայ եւս միանայ այս ծրագիրին:

Ծրագիրը կը ֆինանսաւորէ Համաշխարհային Սկաուտական Շարժումը` այս նպատակին յատկացընելով 17 միլիոն դրամ:



Թիւիւն նիւթերը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական անսաթերթ
 Հրատարակուիւթիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

32ԴԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 1 (367)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 Սեդա Պէշլեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Գրիգորիս Պողարեան
 Արօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում - Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրժ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատաձառի սակն է 4000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշողած է 48000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



photo by Ashnaq©


Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Մեր Տեսակցութիւնները 3
- Անդրադարձ 5
- Պատմութիւն 12
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 19



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 17
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40





ՔԱՐԺՐԱՑԻՐ

«ԲԱՐՁՐԱՑԻՐ-ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»

(Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ՎՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Բարձրանալու ձգտումը մարդկային է: Մարդ էակը այդ ձգտումով կ'արժեցնէ իմացական ու բարոյական իր գերակայութիւնը կենդանական աշխարհին վրայ:

Հակառակ այն իրողութեան, որ կենդանիներու մօտ եւս մտքի եւ բարոյականի ըմբռնումը երբեմն կը համապատասխանէ մարդկայնական իտէալներու, մենք կը հաւատանք սակայն այն աւանդութեան, որ կ'ըսէ թէ՛ «Աստուծոյ պատկերով ստեղծուած է մարդը», այսինքն՝ կատարելիւն ձգտումը, ազնիւին ու բարիին հասնելու տենչը, սիրոյ եւ եղբայրութեան ծարաւը միայն մարդը կրնայ գործնական արտայայտութեան վերածել:

«Բարձրանալու» հանգանակը *անհատական* նպատակ մը ըլլալով հանդերձ՝ *հաւաքական* կոչում մըն ալ կ'ենթադրէ: Մարդկային ընկերութեան մէջ ապրող ամէն անձ, որքան ալ հարուստ ըլլայ նիւթական, մտաւորական ու հոգեկան կարողութիւններով, ան կախեալ է հաւաքականութենէ մը, որուն մաս կը կազմէ ան մարդկային, ազգային կամ միութենական գծով: Հաւաքականութեան մը արժէքներն ու շահերը այս պարագային նոյնքան պարտադիր ուժ ունին՝ որքան անձնական շահերը: Ու եթէ մարդիկ ներդաշնակուելու ստիպողութեան կը հաւատան կեանքի մէջ, անպայման պիտի ունենան նաեւ ձգտումը համամարդկային այն կոչին, որ կ'ըսէ՝

- «Մի՛ ըներ ուրիշին այն, ինչ որ չես ուզեր որ ուրիշը ընէ քեզի: Ըրէ՛ ուրիշին այն, ինչ որ կ'ուզես որ ուրիշը ընէ քեզի»:

Մարդ էակին արժանապատուութիւնը ճշդելու ամէնէն անսխալ փորձաքարն է այս: Ու կը մղուինք ենթադրելու, թէ մարդիկ իրենց կեանքի ամէնէն դժուար քըննութիւնը կու տան այս ճամբուն վրայ:

Այս իմաստով, բարոյական ու մարդկային խորիմաստ հանգանակ մըն է այն, զոր 1918-ին բանաձեւեցին Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիրները, անոնք որոնք հայ

մարմնակրթական շարժումին ռահվիրաները եղան.

- «Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր»:

Մի՛ գոհանար բարձրանալու ձգտումով, որ անհատաբար միայն քեզ կը շահագրգռէ. ունեցիր նաեւ իտէալը ուրիշները բարձրացնելու, ինչ որ բովանդակ ազգը կը շահագրգռէ:

Ձգտէ՛ բարօրութեան, սակայն ջանա՛ որ շուրջդ տկարներ ու կարօտեալներ չմնան:

Ձգտէ՛ փառքի, սակայն փառքի բաժին մըն ալ ճանչցիր նաեւ նմաններուդ համար:

Ձգտէ՛ հոգեմտաւոր զարգացման, սակայն աջակցէ նաեւ ուրիշներու իմացական վերելքին:

Ձգտէ՛ գոյութեանդ ապահովութեան, սակայն մի անտեսեր ազգային հաւաքականութեանդ ապահովութիւնը:

Կը հետեւի, ուրեմն, որ եթէ «բարձրացո՛ւր»-ը չ'ընկերանար «բարձրացիր»-ին՝ ընկերութեան մէջ անխուսափելի կը դառնայ անհաւասարակշռութիւնը: Անխուսափելի կ'ըլլան ատելութիւնն ու թշնամանքը, չար մրցակցութիւնն ու քենը, փոխադարձ նախանձն ու անհանդուրժողութիւնը: Իսկ տուժողը ուրիշները չեն ըլլար, այլ՝ բոլոր անոնք որոնք կը յաւակնին իրենց անհատական բարձրացումին մէջ անխոցելի նկատել իրենց անձերը, փառքերը, հարստութիւնը, մտաւոր պատրաստութիւնը եւ ամէն ինչ:

Բարձրացող ու բարձրացնող մարդն է, որ սիրոյ, ներդաշնակութեան, բարութեան, կատարելութեան եւ հաւաքական վերելքի ճամբան կը հարթէ ընկերութեան դիմաց: «Բարձրացուր»-ին դաւանանքն է, որ մարդուն կու տայ հանրային եւ հաւաքական դերակատարութեան կոչումը եւ արժանաւորութիւնը:

Ու մենք, իբրեւ հայ թէ իբրեւ հայութիւն, այսօր, բոլոր ժամանակներէ աւելի կարօտը ունինք այս դաւանանքի խոր համոզումին ու անկեղծ գործարարութեան:

ԳՈՐԾԵԼ ՀԱՒԱՏՔՈՎ, ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՇԵՂ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍՏ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի
ԵՒ ՍԻՏՆԻԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՆԴՐԱՆԻԿ» ՎԱՍՏԱԿԱՇԱՏ
ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ԵՂԲ. ԶԱԻԷՆ ԲՐՈՒՏԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝
Յովհաննես Մարտոյեան
ՍԻՏՆԻ

2012 թուականը 100-ամեակն էր Եգիպտոսի նշանաւոր քաղաքներէն Աղեքսանդրիոյ մէջ հիմնուած «Կամք» Մարմնամարզական Ակումբին եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան:

Այս ակումբին եւ ընկերակցութեան ոսկէ յոբելեանը մեծ շուքով նշուեցաւ Աղեքսանդրիոյ եւ Սոնթրեալի մէջ: Սիտնիի մէջ եւս գոյութիւն ունի համանուն մասնաձիւղ մը, որ հիմնուած է Աղեքսանդրիայէն Խաղաղականի ափերը գաղթած «Կամք»ի տղոց կողմէ:

Այսօր, ուրախ ենք մեզի հետ ունենալու Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի նախկին անդամ, Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.-«Անդրանիկ» մասնաձիւղի 48 տարիներու գործունէութեան դաշտին մէջ վաստակ ու վարկ ունեցող եւ Հ.Մ.Ը.Մ.ի երեք շքանշաններու արժանացած եղբ. Զաւէն Բրուտեանը:

Հայկական առածը կ'ըսէ. «աւելի լաւ ուշ՝ քան երբեք»: Այս հարցազրույցը որոշուած էր կատարել 2012 թուականին, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով, սակայն ակամայ տեղի կ'ունենայ քանի մը ամսուան ուշացումով: *Խնդրեմ, կրնա՞ք ամփոփ ծանօթութիւններ տալ ձեր մասին:*

- Ծնած եմ Եգիպտոսի Զակազիկ գիւղաքաղաքը, 1931 թուականին: Նախնական ուսումս ստացած եմ Աղեքսանդրիոյ Ազգային Պօղոսեան Վարժարանին մէջ: 1945 թուականին մուտք գործեցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: Դասընկերներէս էր Նշան Սարգիսեանը (հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս եւ ապա՝ Գարեգին Ա. Ամենայն Հայոց): 1948-ին հրաժեշտ տուի Դպրեվանքին, ուսումս Աղեքսանդրիոյ մէջ շարունակելու համար: Միաժամանակ անդամագրուեցայ «Կամք» Մարմնամարզական Ակումբին եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակ-



ցութեան, իբրեւ մարզիկ նախընտրելով աթլետիզմի ճիւղը: Մարզիչներս եղան Կարպիս Քիւփէլեանը եւ Կարօ Մոմճեանը, որոնց փորձառու ցուցմունքներուն շնորհիւ հասայ լաւ արդիւնքներու, յատկապէս ձողով ոստում կատարելու, 100, 200, 400 մետր վազքի եւ դրօշարչաւի մրցումներուն: 1953-ին, Եգիպտոսի համահայկական մրցաշարքերուն, ձողով ոստումի մրցումին արձանագրեցի նոր մրցանիշ մը՝ 3.53 մետր բարձրութիւն: Նոյն տարին, Եգիպտոսի ախոյեանութեան մրցաշարքերուն, տիրացայ երրորդ դիրքին, իսկ Աղեքսանդրիոյ մէջ գրաւեցի առաջին դիրքը: Եգիպտական բանակին մէջ երեք ու կէս տարի ստիպողական հանգամանքով ծառայեցի, միաժամանակ շարունակելով աթլետիզմի եւ լողի փորձերս, ստացայ տասնապետի աստիճան: Այնուհետեւ, շարունակեցի «Կամք»ին ծառայութիւնս՝ մինչեւ Աւստրալիա հաստատուիլս:

Աւստրալիոյ մէջ ի՞նչ գործունէութիւն ծաւալեցիք:

- 1963-ին ընտանեօք գաղթեցինք Աւստրալիա եւ բնակութիւն հաստատեցինք Սիտնի: Ապրուստս ճարելու համար յաճախեցի թեքնիք վարժարան մը եւ մասնագիտացայ էլեկտրական գործերու մէջ: 1965-ին ամուսնացայ Վարդուհի Փաստաճեանի հետ եւ բախտաւորութեանք երկու մանչ զաւակով՝ Ճորճ եւ Կրեկորի: Նոյն տարին անդամագրուեցայ Հ.Մ.Ը.Մ.ի Սիտնիի նորակազմ մասնաձիւղին: Բազմիցս ընտրուած եմ մասնաձիւղի վարչական կազմին մէջ, իբրեւ մարզականի պատասխանատու ու այդ հանգամանքով ղեկավարած եմ համապատասխան յանձնախումբեր, մրցաշարքեր, միջ-մասնաձիւղային Նաւասարդեան հանդիպումներ եւ միջ-արուարձանային մարզախաղեր: Յիշատակութեան արժանի են մասնաձիւղին հիմնադրութենէն երեք տարի ետք, 1968-ին, միջ-մասնաձիւղային Նաւասարդեան առաջին հանդիպումները Սիտնիի եւ Մելբուռնի մասնաձիւղերուն միջեւ: 1979-ին ընտրուած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ անդրանիկ Շրջանային Վարչութեան կազմի անդամ: Վերընտրուած եմ 1982-ին, եր-

կամեայ շրջանի մը համար: Շրջանային հիմնադիր ժողովին պատիւը ունեցանք հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան առաջին ատենապետ, նահատակ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը:

Սկզբնական շրջանին, կատարած եմ Հ.Մ.Ը.Մ-ի «Մարգիկ» պաշտօնաթերթին թղթակցութիւններ եւ մասնակցութիւնս բերած եմ «Արմէնիա» թերթի խմբագրական կազմի աշխատանքներուն:

1983-ին միացայ շրջանի Հ.Յ.Դ. «Դրօ» կոմիտուիտեան շարքերուն եւ մեծ հաւատքով ու հաւատարմութեամբ մինչեւ օրս կը ծառայեմ անկրկնելի մեծ կազմակերպութեան հայրենանրէջր ու ազգակերտ առաքելութեան: 1995-ին, Հ.Մ.Ը.Մ-ի օրւան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Տօքթ. Միսաք Արզումանեանի ձեռամբ արժանացայ «Ծառայութեան» շքանշանին եւ ապա՝ արտակարգ պատուանշանին (1997), իսկ 2007-ին ստացայ Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշանը, ձեռամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին:

Եղբ. Զաւէն, յիշատակութեան արժանի որեւէ բան ունի՞ք ըսելիք:

- Այո, 1963 թուականին երբ Աւստրալիա հասանք, աղեքսանդրիացի խումբ մը տղոց հետ կազմեցինք հայկական առաջին մարզական խումբը՝ «Արմէն-Արմենիա» անունով:

Խումբը Մարիբիլի թաղամասին մէջ մասնակցեցաւ մրցաշարքերու՝ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի խումբերով: Կարճ ժամանակ մը ետք, խումբին անդամները հեռատեսութիւնը ունեցան միանալու համագաղութային կառոյց ունեցող Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Սիտնիի նորակազմ մասնաճիւղին, պաշտօնապէս յուժուած յայտարարելով «Արմէն-Արմենիա» խումբը: Օրին, մեծապէս գնահատուեցաւ մեր այս քայլը:

Եղբ. Զաւէն, գաղութը ծանօթ է ձեր բազմապատակ աշխատանքներուն, յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ի մարզական կեանքին ձեր տրամադրած լայն ժամանակին ու զոհողութիւններուն, միջ-մասնաճիւղային մարզական խաղերու պատրաստութեան, յանձնախմբային ու վարչական գործունէութեան: Նորահաս սերունդին ի՞նչ ունիք ըսելիք այս գծով:

- Կը փոխանցեմ այն ինչ որ սորված եմ նախորդներէս: Գործել հաւատքով, միութենական անշեղ սկզբունքներով, գնահատել իրարու արժէքները եւ հաւաքական շահերը գերիվեր դասել անձնական խնդիրներէ:

Շնորհակալութիւն ձեր տուած շահեկան տեղեկութիւններուն համար: Վստահ եմ, որ ձեր գործունէութեան ծանօթ ազգայիններ, միութենական քոյրեր ու եղբայրներ գնահատանքով պիտի միանան «վարձքդ կատար»ի սրտագին մեր մաղթանքին:



PinkKimberley.com.au



Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՊԱՏՈՒԱԲԵՐ ԵՐԹԸ

(ԱԿՆԱՐԿ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ
78 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ)

Կը նկատեն յարմարագոյնը: Այդ նպատակով անոնք կը դիմեն Հ.Մ.Ը.Մ.Ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան՝ յայտնելով իրենց ծրագիրը:

Պատրաստեց՝ Վ. Աւագեան ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

19

32 թուականին, Պէյրուսի ելեկտրական ընկերութեան մօտ գտնուող հայկական մեծ հիւղաւանը իր Սուրբ Խաչ տախտակաչէն եկեղեցիով հրոյ ճարակ կը դառնայ մէկ գիշերուան մէջ: Տասնեակ հազարաւոր հայեր անպատասպար կը մնան եւ Պէյրուսի գետին արեւելեան ափը անցնելով՝ հիմը կը դնեն Կիլիկիոյ գանազան քաղաքներու անունը կրող ընդարձակ թաղամասերուն, որոնց ամբողջութիւնը կը կոչուի իր տեղանունով՝ Պուրճ Համուտ:

Հոն հաստատուող հայութիւնը, իր հոգեւոր ու մշակութային հաստատութիւններուն կարգին, չ'անտեսեր նաեւ նոր ծաղկող սերունդին ֆիզիքական եւ ընկերային դաստիարակութեան կարեւորութիւնը եւ, գանազան կազմակերպութիւններու կողքին, ծնունդ կու տայ մարզական խումբերու, որոնց մէջ հիմնական տեղ կը գրաւեն Ֆութպոլի խումբերը:

Այդ խումբերուն վարիչները, որոնց կարգին՝ Կիլիկիոյ շրջանի նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ, հետզհետէ կարիքը կը գգան այդ խումբերուն գործունէութիւնը կեդրոնացնել միացեալ ղեկավարութեան մը շուրջ եւ Հ.Մ.Ը.Մ.ի գրօշր



ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1935-ի աշնան երեկոյ մը, Արշակունի Ռաֆայէլեանի բնակարանին մէջ ժողովի կը հրաւիրուին մարզական խումբերուն վարիչները, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարակիցներ ու համակիրներ, եւ այդ օր հիմը կը դնեն Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին: Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Օննիկ Պէօճեքեանի կողքին, ժողովին ներկայ կ'ըլլան Արշակունի Ռաֆայէլեան, Բենիամին Մինասեան, Հայկ Նարկիզեան, Ահարոն Մկրտիչեան, Յակոբ Մինասեան, որոնք կը կազմեն մասնաճիւղին հիմնադիր վարչական կազմը:

Հիմնադիր վարչութեան առաջին գործերէն մէկը կ'ըլլայ Ֆութպոլի բազմաթիւ խումբերէն յառաջացնել Պուրճ Համուտի մասնաճիւղի Ֆութպոլի առաջին կազմը:

1936-ի սկիզբը, վերոյիշեալ վարչութեան կը յաջորդէ Շրջանային Վարչութեան կողմէ նշանակեալ կազմ մը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ կազմակերպել անդամական ընդհանուր ժողով: Նշանակովի այս կազմին ատենապետն էր Յովնան Ոսկերիչեան, իսկ ատենադպիրը՝ Հրաչ Տատեան: Նոյն օրերուն տեղի կ'ու-

նենայ հայ մարզական «Հերոս» միութեան միացումը Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ-ին: Մասնաճիւղի անդամներուն թիւը շուտով կը հասնի 51-ի: Նշանակեալ մարմինը կը կազմակերպէ անդամական ընդհանուր ժողով, որմէ կը բխի մասնաճիւղին առաջին ընտրեալ վարչութիւնը, բաղկացած հետեւեալներէն՝ Սարգիս Գուլայեան, Պետրոս Մանուկեան, Յովնան Ոսկերիչեան, Միսաք Ծենանեան եւ Գէորգ Գասապեան: Առաջին օրերուն վարչական ժողովները տեղի կ'ունենան Սարգիս Գուլայեանի բնակարանը:



Թեամբ, մասնաճիւղը կ'ունենայ իր սկաուտական անդրանիկ կազմը: Ծիւղին հսկողութիւնը կը յանձնուի Յունաստանէն նոր փամանած Մարտիրոս Տաշճեանին:

Նոյն թուականին, մասնաճիւղը կը ստանայ պետական ճանաչում եւ պատասխանատուներու առաջնահերթ մտահոգութիւնը կը դառնայ միութեան ապահովել հաւաքատեղի եւ մարզադաշտ:

Իրերայաջորդ վարչութիւններ մեծ աշխատանք կը տանին կազմակերպական եւ վարչական իմաստով, շարքերը կը խտանան

եւ անդամներու թիւը կը բարձրանայ: Ամէն ճիգ ի գործ կը դրուի մասնաճիւղը հաստատ հիմերու վրայ դնելու, հետզհետէ կազմակերպուող գայլիկներու եւ արեւոյշներու խումբերու կարիքներուն, սկաուտական եւ մարզական մեծ ընտանիքին պահանջներուն գոհացում տալու համար: Աւելի ուշ, Փութպոլի խումբերուն կողքին կը ստեղծուին տղոց ու աղջկանց պասքեթպոլի եւ հեծեյանի խումբեր:

ՍԿԱՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ ԵՒ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Մասնաճիւղին զարգացման եւ յառաջդիմութեան առաջին քայլերը առնելէ ետք, պատասխանատուները կը նկատեն, որ կարելի չէ գոհանալ Փութպոլի գնդակին շուրջ տարուող աշխատանքներով, թէեւ մեծ խանդավառութեամբ անոր շուրջ կը համախմբուի պատանիներու հսկայ թիւ մը: Մասնաճիւղին դիմող պատանիներուն պէտք էր բարոյական եւ մտաւոր գոհացում տալ, մարմին կողքին, դաստիարակել մա'րդը, հա'յր, անոնց հոգին եւ մտային աշխարհը: Այս նպատակներուն իրականացման համար կը կազմակերպուին սկաուտական խումբեր՝ ղեկավարութեամբ սկաուտ առաջնորդ Գէորգ Փանճարճեանի:

1937-ին, խմբապետ Գրիգոր Գազանճեանի ղեկավարու-

ՀԱՒԱՔԱՏԵՂԻ Ի ՀԱՐՅԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Օրէ օր բազմացող նման մասնաճիւղ մը իր բազմաճիւղ գործունէութեամբ եւ անդամներով անպայման կարիքը ունէր հաւաքատեղիի մը: Հիմնադրութեան առաջին օրերուն, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ կ'ունենայ փոքրիկ սենեակ մը, սակայն մեծաթիւ անդամներուն համար ան հետզհետէ նեղ կու

գայ: Անդամներու պահանջին մասամբ գոհացում կը արուի, երբ Նոր Միսի «Ազիրեան» մանկապարտէզի շէնքին մէջ երկու սենեակներ կը տրամադրուին մասնաճիւղին: Գոյութիւն ունեցող նիւթականը կ'արտօնէ վարչութեան՝ Նոր Մարաշի մէջ վարձելու հինգ սենեակներով ու ընդարձակ սրահով յարկաբաժին մը, որ գիշեր-ցերեկ կը խճողուի Հ.Մ.Ը.Մ-ականներով: Այս ծրագիրի յաջողութեան մէջ իր ներդրումը կ'ունենայ Միսաք Ազիրեան, այդ պատճառով ալ ակումբը կը կոչուի անոր անունով:



Միութենականներու թիւի բարձրացման եւ այդ շէնքին դիմագրաւած փրկման վտանգին պատճառով, 1960-ի սկզբնաւորութեան, ակումբը կը տեղափոխուի գերեզմանատան յանձնախումբին շէնքը: 1961 թուականին, Նոր Մարաշի ազգապատկան հողաշերտին մէկ մասը յատուկ համաձայնագիրով մը կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ-ին, պասքեթպոլի դաշտի մը շինութեան համար:


1961-ին, պասքեթպոլի շէնքին յարակից հողաշերտին եւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի «Միհրդատ Թնկըրեան» շէնքին տեղ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը ձեռնարկէ ժողովրդային Տան շինութեան: Շինութիւնը կ'ընդգրկէ Հ.Յ.Դ. «Սարգարապատ» ակումբը, Համազգայինի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահը, ԼՕԽ-ի «Պնակ մը կերակուր»ի ձեռնարկը եւ Հ.Մ.Ը.Մ-ի ակումբը: Ժողովրդային Տան երկրորդ յարկին վրայ վերջնականապէս կը հաստատուի Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղը:



«Մշակ», «Վրէժ», «Յառաջ», «Դրօ», «Քեռի», «Զաւարեան», «Ռոստոմ», «Քրիստափոր» «Սերօր Աղբիւր», «Գէորգ Զաւուշ», «Համագասպ»...), որոնք իրենց շուրջ կը համախմբեն բազմահարիւր խանդավառ երիտասարդութիւն: Մասնաճիւղը կ'ապրի իր զարգացման լաւագոյն օրերը: Նոյնքան մեծ հետաքրքրութիւն կը ստեղծուի մասնաճիւղին կիրարկած այլ մարզախաղերուն՝ պասքեթպոլի, ամօլթիսթիկի եւ մարմնամրչակման շուրջ:

Յաջորդող տարիները Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին թեքնիք յառաջդիմութիւններու տարիները կ'ըլլան: Իրերայաջորդ վարչութիւններ, ժամանակի ընթացքին ձեռք բերուած փորձառութեամբ, կը գործեն կազմակերպական, սկաուտական եւ մարզական բոլոր մարզերուն մէջ՝ բարձրագոյն մակարդակով: Մարզական խումբերը կը մասնակցին պատկան Ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն, կը կազմակերպեն այցելութիւններ եւ կ'ընդունին օտար խումբեր՝ միջազգային հանգամանք տալով մարզական հանդիպումներուն եւ խանդավառ միջնուրտ ստեղծելով իրենց շուրջ: Մասնաճիւղին խումբերը գանազան մրցանակներու եւ բաժակներու կը տիրանան՝ միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանին:

1960-ական տարիներուն մասնաճիւղին սկաուտական շարժումը կը ստանայ նոր թափ: 1961-ին, շարժումը կը բաղկանայ արիական եւ արենուշական չորսական խումբերէ եւ գայլիկական չորս վոհմակներէ: Սկաուտական ընթացիկ աշխատանքներու՝ արշաւներու, բանակումներու, ծնողական հաւաքոյթներու, խարուկահանդէս-



ՏԵՂԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԸՆԹԱՅՈՒԹԻՒՆ

Օրերու հետ, մասնաճիւղը աւելի կը զօրանայ ու կ'ընդարձակուի Պուրճ Համուտի մէջ: Անոր անդամները կը բազմանան: Համաշխարհային Բ. պատերազմի դժուար օրերուն, Հ.Մ.Ը.Մ. իրեն նեցուկ ունենալով շրջանի բնակչութիւնը՝ կը յաղթահարէ ամէն տեսակ դժուարութիւն եւ կը գոյատեւէ, արձանագրելով նորանոր նուաճումներ:

Պատերազմի աւարտէն ետք, վրայ կը հասնի դէպի հայրենիք ներգաղթը, սակայն այս եւս չի կրնար ծանր հարուած տալ գոյատեւելու եւ բարգաւաճելու տենդով ապրող ու պայքարող մասնաճիւղին: 1946 թուականէն ըսկսեալ, մասնաճիւղին կիրարկած մարզական ճիւղերը կը սկսին աւելի որակաւոր դառնալ, ֆութպոլի առաջին խումբին կողքին, կը ստեղծուին երկրորդ դասակարգի խումբեր («Մայր Հայաստան», «Հայրենիք», «Աւարայր», «Խանասոր», «Նաւասարդ»,



ՄԱՆՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Մասնաճիւղի ծաղկուն ժամանակաշրջանին կը յաջորդեն դժուար ու դժբան օրեր: Տասնամեակի երկրորդ կիսուն ծայր կուտան Լիբանանի քաղաքացիական կռիւները: Մեծ թափով սկսած տասնամեակը յանկարծ կը կասեցուի փամփոշտներու սուղոցներով, որոնք կուզան փոխարինելու մարզական դաշտերու վրայ իրաւարարներու սուղոցները: Ռումբերը եւ փամփոշտները թիրախ կը

ներու, դպրոց-բանակումներու եւ մեծ խաղերու կողքին, մասնաճիւղին սկաուտները հրապարակ կուզան գեղարուեստական ելոյթներով: Սկաուտական շեփորախումբը կը վայելէ բոլորին ինամքն ու ուշադրութիւնը: Ան կը դառնայ հպարտութեան աղբիւր, որովհետեւ ազգային-պետական պաշտօնական առիթներով կ'ունենայ փայլուն ելոյթներ: Լիբանանի անկախութեան տարեդարձներուն յիշատակելի են անոր առաջնորդած ջահագնացութիւնները:

1960-ական թուականներու աւարտին, մասնաճիւղին անդամներուն թիւը կը բարձրանայ՝ հասնելու համար 750-800-ի: Նոյն թուականներուն, մասնաճիւղէն սկաուտներ իրենց մասնակցութիւնը կը բերեն Յունաստանի մէջ կայացած միջազգային ճեմպորիին՝ իբրեւ լիբանանեան պատուիրակութեան անդամներ:

ՓԱՍՔԻ ՕՐԵՐ

1970-ական տարիներուն, մասնաճիւղը կը թեւակոխէ իր գործունէութեան կատարելագործման եւ արդիականացման շրջանը: Մարզական ճիւղերը զարգացում եւ բարգաւաճում կ'ապրին եւ կ'ունենան մասնագէտ մարզիչներ: Սկաուտական շաբթերը կ'ունենան միջազգային մակարդակի պահանջները ամբողջացնող կարող աստիճանաւորներ, որոնք կը ըստանան պատկան Ֆետերասիոնի վկայագիրներ: Սկաուտական շեփորախումբը վերակազմութեան, նորանոր ուժերու մասնակցութեան եւ մասնագիտական ու յաճախակի փորձերու իբրեւ արդիւնք՝ կը դառնայ միութեան պատիւ բերող պարծանքի առարկան:

Սկաուտական շաբթերու խտացման ժամանակաշրջան մը կը հանդիսանան 1970-ականներուն առաջին հինգ տարիները, երբ սկաուտութիւնը կը կազմէ մասնաճիւղին ընդհանուր թիւին երեք քառորդը:

դարձնեն նաեւ մասնաճիւղի գործունէութեան շրջանը: Ղեկավարներ, մարզիկներ եւ սկաուտներ կը լծուին հայկական թաղերու պաշտպանութեան գործին:

Լիբանանի մաշեցնող քաղաքացիական պատերազմը, հակառակ հայ ժողովուրդի աննկուն կամքին, կը յաջողի իր լուրջ հետեւանքները ունենայ ինչպէս ազգային բոլոր կառույցներուն, նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Պոլսը Համուտի մասնաճիւղի գործունէութեան վրայ:

Արտագաղթի պատճառով կը նուազի մասնաճիւղի անդամներուն թիւը, զգալի կը դառնայ ղեկավարներու եւ



սկաուտական պատասխանատուներու պակասը: Ապահովական եւ տնտեսական ծանր պայմանները երկար ժամանակ կ'ամայացնեն դաշտերն ու բանակավայրերը: Համեմատաբար նուազ թիւով եւ նօսրացած շաբթերով, մասնաճիւղին գործունէութիւնը կը բոլորուի նստավայրի թաղամասերուն շուրջ: Այս կացութիւնը կը շարունակուի մինչեւ 1990-ական թուականներու սկիզբը:

ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ

Պատերազմի աւարտին, մարզական կեանքի յաջողութիւնները կը յաջորդեն իրարու եւ մասնաճիւղը կը խլէ զանազան մրցաշաբթերու բաժակներ: 1992-ին, սկաուտական բաժինը կը կազմակերպէ «Վիզէն Զաքարեան» երէցական փաղանգը: 1995-ին, մասնաճիւղը հանդիսաւոր ձեռնարկներով կը նշէ իր հիմնադրութեան 60-ամեակը: Այս առիթով, պահ հասած կը նկատուի վերանորոգելու մասնաճիւղին երկար տարիներու ակումբը, որ ժամանակի բերումով մատնուած էր անմխիթար վիճակի: 60-ամեակը առիթ մը կ'ըլլայ Կարպիս Հար-



պոյեանի բարերարութեամբ բարեգարդելու ակումբը եւ զայն օժտելու Հ.Մ.Ը.Մ-ական աշխատանքները աւելի դիւրին եւ կազմակերպուած կերպով իրագործելու կարելիութիւններով: Ի յիշատակ մասնաճիւղի վաստակաշատ եղբայր Երուսաղ Տէմիրճեանի, ակումբին սրահը կը կոչուի «Երուսաղ Տէմիրճեան սրահ»:

Յաջորդող տարիներուն, արդիականացման ընդհանուր հոսանքին հետ, մասնաճիւղը կ'ապրի զգալի յառաջդիմութիւն: Այսպէս, սկաուտական շաբթերուն մէջ կը ներառուին գործունէութիւններ, որոնք նոր ոգի եւ շունչ կուտան մասնաճիւղին: Սկաուտական աշխատանքները կը շարունակուին նորանոր յայտագիրներով: Բանակումները յատուկ ուշադրութեան կեդրոն կը հանդիսանան: Անոնք աւելի մեծ աշխուժութեամբ տեղի կ'ունենան: Նորութիւններ կը բերեն իրենց հետ եւ առիթ կ'ըլլան սկաուտական տեսական գիտելիքները գործնականի վերածելու, արկածախնդրական կեանք ապրելու: Կը շեշտուին նաեւ արտաքին աշխատանքները, ազգային եւ դաստիարակչական բնոյթ կրող գործունէութիւնները, Աւետման գիշերը ազգայիններու տուններ տրուած այցելութիւնները եւ շարականներու երգեցողութիւնը:

2000 թուականներուն, իւրաքանչեւ տեղ կը գրաւեն յաջորդական երկու տարուան վրայ իրագործուած եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան զնահատանքին արժանացած «Էքսթրիմ էտվենչըր», արկածախնդրական խաղերու հրապարակային ձեռնարկները, որոնք իրենց վրայ կը հրաւիրեն ո'չ միայն լիբանանահայութեան, այլեւ՝ ամբողջ Լիբանանի ուշադրութիւնը: Խաղերը կը կազմակերպուին մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդին կողմէ եւ տեղի կ'ունենան Պէյրութի կեդրոնական հրապարակին վրայ:

Նոյն օրերուն, աշխուժութեամբ կը շարունակուի մասնաճիւղին մարզական կեանքը, մանաւանդ՝ պասքեթպոլն ու ֆուտպոլը: Վերստին կեանքի կը կոչուի փինկ-փոնկը: Մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ հեծելաբազա եւ թրէյթին: Պաս-



քեթպոլի աղջկանց խումբը, յաջողութիւններու շարքով մը, երրորդ դասակարգէն կը բարձրանայ երկրորդ դասակարգ:

ՄԵՐ ՕՐԵՐ

2005-2010, Լիբանանի մէջ տիրող անապահով կացութեան պատճառով շատ մը աշխատանքներ կը մատնուին ձախողութեան: 2006-ի ամրան, Յուլիսեան պատերազմին պատճառով, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի պատուիրակութիւնը չի կրնար իր մասնակցութիւնը բերել Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 8-րդ բանակումին, որ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ:

Այնուամենայնիւ, մասնաճիւղը դժուար պայմաններու տակ կը շարունակէ իր աշխատանքները՝ սկստական նոր ծրագիրներու գործադրութեամբ եւ մարզական խաղերուն մէջ նորանոր յաջողութիւններ արձանագրելով:

Սկստական բանակումները կը շարունակուին: Անոնց կողքին, կը կատարուին սկստական այլ աշխատանքներ, ազգային, ընկերային եւ բարեսիրական բնոյթով: Մասնաճիւղը շարք մը այցելութիւններ կու տայ Ազգային թանգա-



կան վարժարաններուն մէջ:

2010-ի ամրան, մասնաճիւղէն 28 քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը կը բերեն Բիւրականի մէջ տեղի ունեցած Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 9-րդ բանակումին: Սկստականները Լիբանան կը վերադառնան 7 մրցանակներով:

2011 Փետրուարին, «Հայ Սկստութի Օր»ուան առիթով, յատուկ նախաձեռնութեամբ մը մասնաճիւղը օգնութեան ձեռք կ'երկարէ հայ կարիքաւոր ընտանիքի մը: «Գործել բարիք մը ամէն օր» նշանաբանէն մեկնած՝ սկստականներ կը հոգան ընտանիքին բոլոր կարիքները, նորոգելով ու կահաւորելով ընտանիքին ամբողջ տունը:

Մարզական գետնի վրայ, մասնաճիւղին պասքեթպոլի խումբը շրջան մը կ'արձանագրէ փայլուն արդիւնքներ: 2005-

2006 տարեշրջանին, խումբը երրորդ դասակարգէն կը բարձրանայ երկրորդ դասակարգ: 2007-2008 տարեշրջանին, խումբը կը գրաւէ երկրորդ դասակարգի երրորդ դիրքը: Յաջորդ տարեշրջանին, խումբը երկրորդ դասակարգի առաջնութեան տիրանալով՝ կը բարձրանայ Առաջին դասակարգ:

Պասքետպոլի տղոց խումբը կը մասնակցի Լիբանանի 4-րդ դասակարգի ախոյեանութեան եւ կ'արձանագրէ գոհացուցիչ արդիւնքներ:


Փինկ-փոնկը կը պարզէ բաւական լաւ պատկեր, իր շուրջ համախմբելով մեծ թիւով պատանիներ: 18 տարեկանէն վար Լիբանանի 2010-ի խմբային ախոյեանութեան, մասնաճիւղին փինկ-փոնկի աղջկանց խումբը կը հանդիսանայ իր դասակարգին երկրորդը, իսկ տղաքը կը գրաւեն չորրորդ դիրքը:

78 տարիներ առաջ, խումբ մը հաւատաւոր եղբայրներ Հ.Մ.Ը.Մ-ի ջանք վառեցին Պուրճ Համուտի սրտին մէջ: Այդ



ջանք սերունդէ սերունդ փոխանցուելով այսօր հասած է նոր սերունդին, որ կոչուած է գայն ոչ միայն անմար պահելու, այլեւ՝ իր հետ տանելու շատ հեռուները գտնուող, բայց Հ.Մ.Ը.Մ-ականներու սրտին միշտ մօտ եղող Արարատ լեռան գագաթը, իբրեւ երաշխիք հայ ժողովուրդի յարատեւ երթին՝

Դէպի յաղթանակ, դէպի Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստան:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)



Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիղի փայլուն վաստակէն մաս մը:

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Դ. ՄԱՍ

Ատոր համար ալ Դամասկոսի դիմումը, Հալեպի մէջ Ֆուլթպոլի մրցումի մը համար կը մերժուի, որովհետեւ «պահանջուած գումարը՝ 120 ս. ոսկի, կարելի չէր հայթայթել այդ մրցումներէն»:

Ընդհանուր գործին զարգացման ու վերելքին համար էականը նիւթականն էր, բան մը որ կը պակսէր Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերուն: Դահեկանները մեծ նշանակութիւն ունէին մոտաքի թէ ելքի հաշիւներուն համար: Հալեպ, որպէս հայկական ամէնէն հոծ գաղութը ու Հ.Մ.Ը.Մ.ի համար կարեւորա-

գոյն մասնաճիւղը, անկասկած, որ աւելիով կարիքը ունէր նիւթական աղբիւրներու, ատոր համար ալ շարժանկարի երեկոյթ, վիճակահանութիւն, պարահանդէս միջոցներ էին հատոյթ ապահովելու:

Հալեպի մասնաճիւղը, նախանձախնդիր հայկական բոլոր խումբերու համագործակցութեան ու վերելքին, դարձեալ նախաձեռնարկ կ'ըլլայ յառաջացնելու հայկական լիկ մաշի խաղերու շարքը: Իր հրաւերին կը պատասխանեն «Վասպուրական», «Ուսումնասիրաց», «Արարատ», «Նուպարեան», «Համագասպ» ու Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութիւնը: Ժողովը տեղի կ'ունենայ 12 Դեկտեմբեր 1931-ին, Հ.Մ.Ը.Մ.ի ահումբը: Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ ներկայ կ'ըլլան պահեստի եւ սկաուտական խումբի ներկայացուցիչները: Գեղեցիկ տրամադրութեամբ ճամբայ ելած այս ձեռնարկը, դժբախտաբար, իր առաջին խորհրդակցական ժողովէն ետք, երկրորդը տեղի չունենար: Ձեռնարկը կը ձախողի:

18 Դեկտեմբեր 1931-ին, Հալեպի Ֆուլթպոլի առաջին խումբը ճամբայ կ'ելլէ դէպի Պէյրութ՝ մրցելու Ամերիկեան Համալսարանի եւ տեղական ուրիշ խումբի մը հետ: Փոխադարձ համաձայնութեամբ կարգադրուած այս մրցումը, Պէյրութի մէջ, անկասկած որ մեծ հետաքրքրութիւն պիտի ստեղծէր Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

Սկաուտական հարցը, սեպուհ նպատակը Հ.Մ.Ը.Մ.ին, ասոր Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հիմնուելուն առաջին օրէն, առաջին մասնաճիւղէն մինչեւ միւսները, ու այդ մասնաճիւղերուն իրարու յաջորդող բոլոր վարչութիւնները ամէնէն շատ զբաղեցնողը եղած է, ամէնէն նուազ արդիւնքով: Երկրորդ պատգամաւորական ժողովէն ետք, սկաուտական շարժումը աւելի ամուր հիմերու վրայ դնելու համար, կատարած ըլլալու համար պատգամաւորական ժողովին կարեւոր որոշումներէն մէկը, Շրջանային Վարչութիւնը լայն սահմանով կ'ունենայ խորհրդակցական ժողով, ուր ներկայ կ'ըլլայ նաեւ միութեան պատուոյ նախագահ Գասպար Իփէկեան: Ժողովին կ'որոշուի «զարկ տալ սկաուտներու կազմակերպման գործին՝ այդ ուղղութեամբ կեդրոնացնելով ուժերը: Գործին սկսելու համար գտնել ու բերել վարիչ սկաուտ խմբապետ մը»:

Խօսքէն գործի անցնելով, Շրջանային Վարչութիւնը իր 16 Հոկտեմբեր 1931-ի նիստին, անդրադառնալով խորհրդակցական ժողովի որոշումին, սկաուտական վերին մարմնին կը գրէ. «մանրամասն տեղեկութիւն ուզուեցաւ Սուրիոյ շրջանը զրկուելիք սկաուտ մարզիչ ժիրայր Մինթանճեանին»:

նիւթական պայմաններուն մասին»: Վարչական նոյն նիստին, նկատի առնելով կեդրոնական Վարչութեան նամակը, «որոշուեցաւ պատասխանել եւ խնդրել պատգամաւորական ժողովի արդիւնքը, նոր կազմուած ծրագրիկանոնագրի պատճէնը, նաեւ պատճէնը Ֆրանսական կառավարութեան իրենց արտօնագրին»:

«Որոշուեցաւ նաեւ բաղձանք յայտնել անոնց, համաձայնական եզր մը գտնել եւ համերաշխ գործել այն Հ.Մ.Ը.Մ.ականներուն հետ, որոնք պատգամաւորական ժողովէն հեռացած, այժմ «Մարգաշխարհ» անունով պարբերաթերթ մը հրատարակելու ձեռնարկած են»:

Դամասկոս իր 19 Հոկտեմբեր 1931 թուակիր նամակով, Շրջանային Վարչութեանէն 100 անդամատետր ուղելէ ետք, անոր վաւերացման կ'ենթարկէ մասնաճիւղին նորընտիր վարչութիւնը, որուն անդամներէն են՝ Սեզար Թերճուլմանեան, Յովհաննէս Թնճուկեան, Սիսակ Պոյաճեան, Մելիքոֆ Արսլանեան, Անտոն Աւետեան, Յարութիւն Օղլագեան եւ Կարապետ Թոքաթլեան:

Լաթաքիան, անելի մատնուած, կը գրէ Շրջանային Վարչութեան. «Քաղաքիս մէջ Հ.Մ.Ը.Մ.էն զատ կազմուած են իսլամ եւ յոյն ֆուլթպոլի խումբեր:

«Իւրաքանչիւրը ինքնուրոյն դիմագիծը պահելով հան-

1959. Զ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ ֆուլթպոլի խումբը միջ-մասնաճիւղային 33-րդ մարզախաղերուն:



դերձ, կը մտածուի կազմել լաւագոյն խաղացողներէ Լաթաքիոյ խումբ, որ մէջտեղ պիտի գայ միայն օտար խումբերու դէմ. ի՞նչ պիտի ըլլայ մեր դիրքը: Ձեր պատասխանին կը սպասենք»: Շրջանային Վարչութիւնը 16 Հոկտեմբեր 1931-ի նիստին, նկատի առնելով տեղական կարգ մը պարագաներն ու պայմանները, Լաթաքիոյ կ'արտօնէ մասնակցելու կազմուելիք խումբին:

Չափէ՛ 5 Մարտ 1931-ին կը գրէր Շրջանային Վարչութեան իր վերակազմութիւնը: Ատեն մը շարունակելէ ետք, ներքին անհամաձայնութեան մը հետեւանքով, մասնաճիւղը կը կաղայ: Շրջանային Վարչութեան անդամ Գէորգ Սազճեան, գործով Չափէ այցելութեան առիթէն օգտուելով, կը խրախուսէ տղաքը, որոնք կը գումարեն ժողով մը եւ կ'ընտրեն վարչութիւն մը բաղկացած՝ Հրանդ Լամպաճեանէ, Կիրակոս Թապաքեանէ, Մերուժան Ունճեանէ: Անոնք կը դիմեն Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում, խնդրելով նոյն ատեն «այսուհետեւ մասնաճիւղը տեղեակ պահել» վարչական հրահանգներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մասին:

Հեռաւոր Գրք Խանէն, որ կը գտնուի Հալէպէն 100 քլմ. հեռու, Ալէքսանտրէթի ճամբուն վրայ, բլուրի մը կողքին, ուր կ'ապրին երեք հարիւր տուն կիլիկեան գաղթականներ, հոն եւս



1955. Զ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի եւ Հալէպի պասթօրապոլի աղջկանց խումբերը միջ-մասնաճիւղային մարզախաղերու առթիւ:

1948. միջ-մասնաճիւղային 4-րդ մարզախաղեր Պէյրուսի մէջ:



ւորական ժողովի որոշումները, որոշեց նամակով մը պահանջել որ ընթացք տրուի, հակառակ պարագային պիտի ստիպուինք Սուրիոյ շրջանին համար առանձին ներքին կանոնագիր մշակելու»:

Որպէսզի Դամասկոս եւս ապրի հայկական մարզական կեանք, անդժուրի ետեւին հայկական բոլոր խաւերուն մէջ, Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ մտածով մը կը գրէ Դամասկոս հասկնալու համար թէ «Հնարաւորութիւն ունի այս տարի հոն կազմակերպելու ողիմպիականը, նկատի ունենալով որ մօտ 150 հոգի պիտի մասնակցին»:

հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ-ին: Նորակազմ վարչութիւնը կը գրէ Շրջանային Վարչութեան.

«Ուրախ ենք յայտնելու, թէ տեղւոյս երիտասարդները համախմբուած են Հ.Մ.Ը.Մ-ի անուան տակ եւ գործի սկսած, ղեկավարուելով անժամեայ վարչութեան մը կողմէ:

«Վարչութիւնս անմիջապէս գործի ձեռնարկելով Հայէպէն բերել տուաւ Ֆուլթալ մը եւ ծրագիր-կանոնագիր, որուն տրամադրութիւններուն համաձայն անդամագրուեցան:

«Այս առթիւ ձեռքով կը խնդրուի որ բարեհաճէիք պէտք եղած կարգադրութիւնը ընել մեզի համար, քաջալերելով ձեր ամէն տեսակի օժանդակութիւններով»: Նամակը գրուած է 1 Հոկտեմբեր 1931 թուականի եւ ստորագրուած է ատենապետ Արամ Մինասեանի եւ ատենադպիր Մ. Գրիգորեանի կողմէ:

Պէյրուսի վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկագրէ Շրջանային Վարչութեան, որ երկար աշխատանքէ ետք կարողացած են դաշտը վերստանայ նոր պայմանագրութեամբ մը, եւ որպէսզի վարչութիւնը կարենար գոհացնել պայմանագրութեան նիւթական տրամադրութիւնը, կ'աճապարէ շարժանկարի երեկոյթ մը տալ ու կը պատրաստուի տօնել, Հ.Մ.Ը.Մ-ի 13-րդ տարեդարձը, նախագահութեամբ Գասպար Իփէկեանի:

Պուլկարիոյ շրջանէն շրջաբերականով մը կը յայտնեն, որ «ցարդ գայիկներու որպէս ուղեցոյց որեւէ գրքոյկ հրատարակուած չէ. համախորհուրդ շրջանիս Սկառտական Շրջանային Խորհուրդին որոշեց այս գրքոյկը հրատարակել»: Եւ Շրջանային Վարչութեան կը գրեն 25 օրինակներ, որոնք կը բաժնուին Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերուն:

Պէյրուսի մասնաճիւղը, խորհրդակցական ժողովի որոշումով, ամէն ջանք կը թափէ ժիրաջր Մինթանճեանի Լիբանան-Սուրիա մուտքի արտօնութիւն ստանալու համար: Թափուած աշխատանքը ապարդիւն կ'անցնի:

Շրջանային Վարչութիւնը իր 10 Փետրուար 1932-ի նիստին, նկատի առնելով որ «կեդրոնական Վարչութիւնը ցարդ ուղարկած չէ միութեան ներքին կանոնագիրը եւ պատգամա-

1941. Հայկա, քաղաքապետարանի բաժակի աւարտական մրցում:



ատենագրութիւն, 10 Փետրուար 1932):

Դամասկոս Շրջանային Վարչութեան կը պատասխանէ 26 Փետրուար 1932 թուականով, ողիմպիականութեամբ:

«Քաղութի մէջ անկարելի է այդ տեսակ բան մը կազմակերպել հայութեան քիչ եւ աղքատ ըլլալուն պատճառաւ: Քաղով թուականին, Չատիկը յարմարագոյն է երբ կարելի է քաղաքէն բացակայի:

«Փետրուար 14-ին, Հայէպէն, Սելլում եղբայրներէն ստացանք նամակ մը. անոնք բաժակ մը տրամադրելով, ախոյեանական մրցումի կը հրաւիրեն: Այս մասին Ձեր կարծիքը կ'ուզենք»: Հայէպի մասնաճիւղն այնչափ հրաւէր մը ստացած ըլլալուն, իր 16 Փետրուար 1932-ի վարչական նիստին կ'որոշէ մասնակցել յայտագրին ծանօթանալէ ետք:

Պէյրուսի մասնաճիւղը, միութեան 13-րդ տարեդարձը տօնելէ ետք, 2 Մարտ 1932-ին, կ'որոշէ «մարզական-գեղարուեստական հանգէս մը սարքել Ապրիլ ամսուան մէջ եւ հասոյթը յատկացնել դաշտի վարձքին»: Իսկ «Մայիս ամսուան մէջ կատարուելիք տեղական մարզահանդէսին խաղերը կազմակերպելու համար կը նշանակուի յանձնախումբ մը հետեւեալներէ:

Օննիկ Փիլիկեան, Հայկակ Տէր Մանուէլեան, Կարպիս Մերտինեան եւ Ներսէս Գազազեան: Վարչութեան հրաժարող «երեք անդամներուն տեղ նորերու ընտրութիւնը կը կատարուի Փետրուար 14-ին ու Շրջանային Վարչութեան վաւերացման կ'ենթարկուի 2 Մարտ 1932 թուականով: Այդ երեք անձերն են Պետրոս Շամլեան, Խաչեր Երէցեան եւ Յակոբ Պուճիգանեան: Հաժաքիա նոյն թուականը նամակով, 2 Մարտ, մասնաճիւղին նորընտիր վարչութեան կազմը կը ներկայացունէ Սիսակ Տէմիրճեան, Գրիգոր Չպուքճեան, Հայկ Ղազարեան, Գայուստ Շիրտըմեան, Յակոբ Գամպուրեան, Կարպետ Սերայտարեան, Պետրոս Ուղուրլեան: Իսկ Մարտ 3-ին գրուած նամակով, Հայէպ կը տեղեկագրէ մասնաճիւղին նորընտիր վարչականները Լուտեր Մասպանճեան, Միհրան Կարապետեան, Յակոբ Միւլահեան, Խորէն Հելվանեան, Նշան Թիւսիզեան, Անդրանիկ Աթաբեան, Յարութիւն Խաչատուրեան: Շրջանային Վարչութիւնը Հայէպին ուղղած 9 Մարտ 1932 թուականի վաւերագիրը նամակին մէջ, անդրադառնալով տարեկան ողիմպիականին ու Ֆուլթալի ախոյեանական մրցումներուն կ'ըսէ. «Որոշած ենք մասնաճիւղերուն որոշում տալու համար, միջ-մասնաճիւղային Ֆուլթալի մրցումները զատել ողիմպիականէն: Ֆուլթալի մրցումները, մասնաճիւղերու փափաքին համաձայն, նորէն տեղի պիտի ունենան, ըստ սովորութեան, Չատիկուան առաջին եւ երկրորդ օրերը՝ Հայէպի մէջ:

«Այս առթիւ պարտք կը դրուի Ձեր վրայ օգնել Շրջանային Վարչութեան, զիւրացնել անոր աշխատանքները եւ արդիւնաւորել:

«Այն մասնաճիւղերը, որոնք պիտի մասնակցին Ֆուլթալի մրցումներուն, իրենք պիտի հոգան Ֆուլթալի խաղացողներուն երթելու եւ Ժախաբ, իսկ անոնց անունդն ու պանդուկը պիտի հոգացուի հասոյթէն: Եթէ աւելորդ գումար մը մնայ, կէսը պիտի յատկացուի Ձեր դաշտին, կէսն ալ պիտի մնայ Շրջանային Վարչութեան: Յոյս ունինք որ մեր այս առաջար-

կը սիրով պիտի ընդունիք... Բոլոր մասնաճիւղերուն գրեր ենք... երբ պատասխանները ստանանք պիտի գրենք Ձեզի»:

Հ.Մ.Ը.Մ-ի տարեկան միջ-մասնաճիւղային Ֆուլթպոլի մրցումներուն առնչութեամբ, Եաֆայէն 11 Մարտ 1932 թուակիր նամակով Հ.Մ.Ը.Մ-ի լաւագոյն մարզիկներէն ու վարիչներէն Յովհաննէս Շահինեան կը գրէ.

«Հակառակ որ միջոցը զիս հեռու կը պահէ Ձեզմէ եւ առիթը չունիմ իմ համեստ բաժինս բերելու Ձեր եւ իմ, բոլորիս այնքան սիրած միութեան աշխատանքներուն, այսուամենայնիւ, թերթերու եւ նամակներու միջոցաւ տեղեկանալով Ձեր յառաջդիմութեան ու նուաճումներուն, հպարտութեան հետ գոհունակութիւն եւ հրճուանք կ'ունենամ իբրեւ մասնիկը այդ միութեան բազմանդամ ընտանիքին:

«Յուսալով որ այս տարի եւս պիտի ունենաք սովորական միջ-մասնաճիւղային Ֆուլթպոլի Ձեր մրցումները, այժմէն կու գամ իմացնելու, որ որպէս նախկին խաղացող եւ այժմ միայն հեռուէն հետեւող միութեան աշխատանքներուն, կը փափաքիմ այս տարուան մրցումներուն համար տրամադրել ախոյեանական բաժակը՝ Շահինեան Եղբարք անուան տակ: Եւ առ այդ պիտի խնդրէի որ ըլլալիք բոլոր կարգադրութիւնները բարի ըլլալիք կատարելու եղբօրս՝ Պօղոսին հետ:

«Երանի թէ բախտաւոր առիթը ունենայի ականատես ըլլալու եւ վայելելու այն հաճոյալի ժամերը, որ կը ստեղծուին մրցումներու այդ օրերուն»:

Ձահլէի մասնաճիւղը եռանդագին աշխատանքի լծուած է: Իր հերթական կանոնաւոր ժողովներուն, որոնք առհասարակ ընդհանուր անդամական ժողովներու բնոյթ կը կրեն, հարցերը կը դրուին բոլորին կողմէ ու հաւաքաբար լուծում կու տան: Այս ժողովները զբաղեցնող հարցերն են.- Ֆուլթպոլիստներու նոր շապիկ՝ Ջատկուան մրցումներուն համար, Հ.Մ.Ը.Մ-ի 13-րդ տարեդարձի պատշաճ տօնակատարութիւն, խմբապետ Սարգիս Ունճեանի ընտրութիւն, Պաալպէքի հետ խառն խումբով Ռայաքի գինուորական խումբին հետ մրցում, սեղմ շրջանակի մէջ նուիրահաւաք՝ շապիկներուն համար, Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան լուծարքը եւ անոր անդամներուն հրաւեր ուղղելու խնդիր, Դամասկոսի մասնաճիւղին Բ. խումբին հետ մրցելու հրաւերին ընդառաջում. ահա՛ հարցեր որոնք հետզհետէ իրենց պատշաճ լուծումը կը գտնեն վարչութեան թէ անդամներուն կողմէ: Թրիփոլի եւս անմասն չէ միութեան կեանքին վերաբերող հարցերէն՝ գրադարան, երգչախումբ, կարգապահութիւն ու մանաւանդ լսարան՝ «Տեղույս Հ.Մ.Ը.Մ-ի եռանդուն վարչութիւնը միշտ գործի վրայ է: Լսարանները երկու շաբաթը անգամ մը կը սարքեն՝ ճոխ յայտագրով: Այս շաբթուան համար թրիփոլահայութեան որպէս նորոյթ սարքուած էր հրապարակային վիճաբանական ասուլիս» («Ազդակ», 1932 թիւ 554):

(Շար.4)


ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY




Armavia
Արմավիա


Photos: © Yann Arthus-Bertrand / La Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 PARIS




11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ԵՐԿԱՐԱԿԵԱՑ ՍԸՐ ԱԼԵՔՍ ՖԵՐԿԸՍԸՆ



Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Աւելի քան 20 տարիէ Մանչեսթըր Եունայթըտի համակիրներուն յոյս ներշնչող ու յաղթանակներ եւ տիտղոսներ պարգեւող այս մարզիչը ոսկի տառերով զրած է իր անունը ֆուլթայլիստ եւ մանաւանդ Եունայթըտի պատմութեան տոմարներուն մէջ: Ան Մանչեսթըր Եունայթըտի ամէնէն երկարակեաց մարզիչն է:

Ո՞վ է Ալեքս Ֆերկըսըն:

Բնիկ սկոթլանդացի Ֆերկըսըն ծնած է 31 Դեկտեմբեր 1941-ին: Ան եղած է աննշան ֆուլթայլիստ, սակայն իբրեւ մարզիչ տարբեր ակումբներու եւ ի մասնաւորի Մանչեսթըր Եունայթըտի հետ ան կերտած է պատմութիւն: Իբրեւ ֆուլթայլիստ, Ֆերկըսըն հանդէս եկած է սկոթլանդական Քուինզ Փարք, Սէնթ Ճոնսթըն, Տանֆրմլայն եւ Ռէյնսփըրգ ակումբներուն հետ: 1965-1966, 31 կողով ան հանդիսացած է Սկոթլանդի կոլ-սքորըր: Ապա, կը միանայ Ֆալքերիք ակումբին եւ ֆուլթայլիստի ասպարէզը կ'աւարտէ 1974-ին, երբ արդէն մարզիչ-մարզիչ էր Սթիրլինկայըր ակումբին: Նոյն




տարուան ամառը ան կը ստանձնէ Սէնթ Միրըն ակումբի մարզիչի պաշտօնը եւ 1976-1977 տարեշրջանին անոր հետ կը շահի Սկոթլանդի ախոյեանութիւնը:


1978-ին ան կը միանայ Ապըրտին խումբին եւ կը սկսին Ֆերկըսընի յաջողութիւնները: Ան Ապըրտինի հետ երեք անգամ կը տիրանայ Սկոթլանդի ախոյեանութեան, չորս անգամ՝ բաթակին, մէկ անգամ՝ Լիկայի բաթակին եւ, ամէնէն կարեւորը, Ապըրտինի կ'ապահովէ եւրոպական առաջին տիտղոսը, երբ 1983-ին Ապըրտին կը տիրանայ Բաթակակիրներու Բաթակին (այժմ ջնջուած) եւ նոյն տարին կը խլէ Եւրոպայի Սուպըր Բափը: Այս յաջողութիւնները արդէն զինք կը դարձնեն հանրածանօթ մարզիչ: 1985-ին, կարճ ժամանակի համար, ան կը ստանձնէ ազգային խումբի մարզիչի պաշտօնը եւ կը մասնակցի 1986-ի Մոնտիալին: Մոնտիալի աւարտէն անմիջապէս

ետք, ան կը հրաժարի ազգային խումբին մարզիչի պաշտօնէն եւ Նոյեմբերին կը ստանձնէ Մանչեսթըր Եունայթըտի մարզիչի պաշտօնը:

Ֆերկըսընի Եունայթըտ ժամանումը նոր էջ մը կը բանայ այս հռչակաւոր ակումբին պատմութեան մէջ: Արդիւնքներն ու տիտղոսները չեն ուշանար ապացուցելու, թէ Ֆերկըսըն փայլուն մարզիչ մըն է: Առաջին տարիներու անոր աշխատանքները արդիւնաւորուելու կը սկսին 1990-ական թուական-



ներուն ու ահա Մանչեսթր Եունայթըտ կը դառնայ ո՛չ միայն անգլիական ախոյեանութեան հզօրագոյն խումբերէն, այլեւ՝ եւրոպական չափանիշով ան ինքզինք կը սկսի պարտադրել Եւրոպայի տարբեր մրցաշարքերուն: Ֆերկըսըն կը ստեղծէ ներդաշնակ կազմ մը, որուն խաղաոճն ու թաքթիքը տակաւին իրենց պտուղները կու տան մինչեւ այսօր: Շուրջ 26 տարիներու իր մարզիչութեան ընթացքին ան Եունայթըտի կը պարգեւէ ախոյեանութեան 12 տիտղոս (Եունայթըտ 135 տարուան ընթացքին տիրացած է 19 ախոյեանութեան): Անգլիոյ բաժակի տիտղոսներէն հինգը շահուած է Ֆերկըսընի տարիներուն: Լիկայի չորս բաժակները Եունայթըտ շահած է Ֆերկըսընի հետ: Չեմփիրնգ Լիկի երեք տիտղոսներէն երկուքը Ֆերկըսըն ապահովեց Մանչեսթրի: Եւրոպայի բաժակակիրներու բաժակի տիտղոսը 1991-ին Եունայթըտ շահեցաւ Ֆերկըսընի հետ: Չերիթի Շիլտի բաժակներէն տասն Ֆերկըսընի օրով շահուած է: Եւրոպայի Սուփըր Քափը դարձեալ անոր օրով եկաւ Մանչեսթրը: Միջ-ցամաքամասային երկու բաժակները եւս Ֆերկըսըն պարգեւեց Եունայթըտի: Այլ խօսքով, Ֆերկըսընի 26 տարիներու մարզիչութեան շրջանին Եունայթըտ յաջողած է տիրանալ 37 տիտղոսի, ինչ որ պատկառելի եւ նախանձելի թիւ է թէ՛ ակումբին եւ թէ՛ մարզիչին համար: Այս տարիներուն բազմաթիւ անուանի խաղացողներ մաս կազմած են հռչակաւոր այս ակումբին. Փրանսացի էրիք Քանթոնա, Ռոյ Բին, Մարք Հիուզ, Փիթըր Շմայքըլ, Տէյվիտ Պեքհամ, Փօլ Սքոլզ, Եսփի Սթամ, էտուին Վան Տէր Սաար, Նիքի Պաթ, Կէրի Նելսոն, Լէս Ֆերտինանտ, Ռայըն Կիկզ եւ այլն: Այս մարզիկները իրենց խաղընկերներուն հետ յաղթանակներու անմոռանալի պահեր պարգեւած են Եունայթըտի սիրա-



հզօր Ռէյալ Մատրիան է:

Ֆերկըսըն փորձառու եւ չյուսահատող մարզիչ է: Ան գիտէ լաւագոյնս օգտագործել իր ակումբին կարելիութիւնները եւ օգտուիլ հակառակորդին թերութիւններէն: Յաճախ մետասաներորդ պահուն անակնկալ փոխարինումներով եւ անակնկալ կոլերով ան յաղթանակներ կ'ապահովէ իր ակումբին: Չեմփիրնգ Լիկի 1998-1999 տարեշրջանի աւարտական մրցումը այս մէկուն լաւագոյն ապացոյցն է: Մրցումի 90 վայրկեանները աւարտած էին եւ Պայէրն Միւնխի մարզիկները, պատասխանատուներն ու համակիրները արդէն տիտղոսը ապահոված կը նկատէին: Ֆերկըսըն եւ իր տղաքը սակայն այլ կարծիքի էին: Կորսուած վայրկեաններուն երկու անակնկալ կոլերով անոնք կարողացան գրպանել տիտղոսը: Այս մրցումը կը մնայ Չեմփիրնգ Լիկի ամէնէն անակնկալ աւարտ ունեցող մրցումը:

Ֆերկըսըն արդէն յոգնած է եւ տրամադիր է հրաժարելու մարզիչի իր պաշտօնէն: Սակայն Մանչեսթրի պատասխանատուները չեն ուզեր ազատ ձգել այս հմուտ մարզիչը եւ ամէն գնով կը պահեն զայն:

հարներուն եւ բաժակներով լեցուցած են ակումբին դարանները:

Ֆերկըսընի խաղաոճը պարզ ու յստակ է: Ան հիմնուած չէ աստղերու վրայ: Ան հաւաքական խաղաոճ քանդակող է եւ այդ պատճառով ալ երբեմն մարզիկներու բացակայութիւնը կամ մեկնումը ակումբէն ցնցումներ չեն յառաջացներ կազմէն ներս: Քանթոնայի կամ Պեքհամի մեկնումով խումբը եթէ պահ մը կաղաց, ապա շատ շուտ ինքզինք վերագտաւ եւ շարունակեց իր յաղթարշաւը:

Այս բազմաթիւ յաջողութիւնները Ֆերկըսընի տուին Սըր տիտղոսը: Այս տարեշրջանին, հակառակ որ ակումբը անուանի մարզիկներով չէ օժտուած, ինչպէս որ մրցակիցներն են, սակայն ան կը մնայ ախոյեանութեան գլխաւոր թեկնածուն: Ան նաեւ յաւակնութիւններ ունի Չեմփիրնգ Լիկի նկատմամբ, հակառակ որ մրցակիցը



photo by Ashnag ©

Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ԱՄԵԱԿԻ ԵՒ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան, Կիրակի, 24 Փետրուարի երեկոյեան ժամը 6-ին, «Միշէլ Մըր» մարզահամալիրի փակ մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակին եւ «Հայ սկաուտի օր»ուան մեծաշուք տօնակատարութիւն:

Տօնակատարութիւնը կանխեց պասքեթպոլի մրցում մը, որ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի եւ Հալէպի (վերջին դէպքերուն պատճառով Լիբանան ապաստանած Հ.Մ.Ը.Մ.ականներէ բաղկացած) խումբերը եւ աւարտեցաւ ի նպաստ Հալէպի, 37-36 արդիւնքով:



Օրուան յայտագիրը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին առաջնորդութեամբ եւ մասնաճիւղի սկաուտներուն եւ մարզական բոլոր խումբերուն (պասքեթպոլ, ֆութպոլ, ճատրակ, փինկ-



փոնկ) տողանցքով: Տողանցքին իր մասնակացութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պասքեթպոլի խումբը:

Շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կատա-



րում էն ետք, Հ.Մ.-
Ը.Մ-ի Պուրճ Հա-
մուտի մասնաճի-
ղին խօսքը փոխան-
ցեց եղբ. Յակոբ
Չպլաքեան: Ան խօ-
սեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի
կարեւորութեան եւ
հայութեան կեանք-
ին մէջ ունեցած
մեծ դերակատա-
րութեան մասին,
հակառակ մերօր-
եայ բազմաթիւ
մարտահրաւէրնե-
րուն եւ համաշ-
խարհայնացման
մեծ ալիքին: «Որով-
հետեւ մենք՝ իբրեւ



photo by Ashnag©

ազգ, եւ իբրեւ այդ
ազգին ծոցէն ծնած
մարմնակրթական
միութիւն, կը մեր-
ժենք ժխտական երեւոյթները
եւ պայ-
ծառ հոգիով ու աչքերով
կը նայինք ապագային,
մենք կը գիտակցինք
մարտահրաւէրներուն,
կը վերցնենք ձեռնո-
ցը եւ արի կամքով ու
հաւատքով կ'երթանք
յառաջ, իբրեւ նահատակ
ցեղի անմահներու արժանաւոր
սերունդներ», յայտնեց ան:

Այսօրուան սերունդի
կեանքի պայմաններուն
անդրադառնալով, եղբ.
Չպլաքեան դիտել տուաւ,
որ սկաուտութիւնը
նոր սերունդները
անգոյն, անհամ եւ
միապաղաղ իրականութենէն

դուրս հանելու,
բուռն պայքար մղե-
լու լաւագոյն միջոց-
ներէն մէկն է: «Այ-
սօր, աւելի քան եր-
բեք, սկաուտական
շարժումը ունի կեն-
սական դերակատա-
րութիւն մարդոց հո-
գիներուն մէջ վերա-
կենդանացնելու հա-
մար բնութեան հո-
գատարութիւնը, Աս-
տուծոյ հանդէպ հա-
ւատքը եւ հայրենիքի սէրը,
որովհետեւ



իբրեւ լեռներուն գա-
զաթները սլացող ար-
ծիւններ եւ ոչ թէ ստո-
րոտները սողացող սո-
ղուններ», հաստատեց
ան:

Ապա, շեփոթախում-
բը նուագեց երկու եղա-
նակ, որմէ ետք ցու-
ցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի
Պուրճ Համուտի պատ-
մականը, տասնամեակ-
ներու վաստակը եւ գոր-
ծունէութեան տարբեր

դաշտերը ներկայացնող տեսերիզ մը
(տեսերիզին բովանդակութիւնը տեսնել
առանձին գրութեամբ մը, էջ 5-11), որուն
համար իր պատգամը յղած էր Հ.Մ.-
Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան հայ-
րենի անդամ եւ Հ.Ս.Շարժումի Բիւրոյի
անդամ եղբ. Բազրատ Եսայեան:

Գեղարուեստական բաժինին իրենց
մասնակցութիւնը բերին արեւոյշները՝
նազպարով եւ երէց փաղանգը՝ բուրգի
ներկայացումով:

Օրուան պատգամներն էր Հ.Մ.-
Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչու-
թեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշ-
եան: Ան իր խօսքին մէջ լուսարձակի
տակ առաւ 95 տարի շարունակ սե-
րունդներ դաստիարակած, հայցեցի
կրթութիւն ջամբած, սերունդներուն
մէջ հայկական ինքնութիւն քանդակած
եւ աշխարհատարած 104 մասնաճիղե-



o by Ashnag©



րով գործող Հ.Մ.Ը.Մ-ի կարեւորութիւնը:

«95 տարիներ Հ.Մ.Ը.Մ. բարձրացաւ ու իրեն հետ բարձրացուց ազգային պատիւը, նուիրագործեց իր վսեմ կոչումը, դաստիարակեց իրերայաջորդ սերունդներ ու անթիւ, անհամար մարզիկներ, պատրաստեց իր կոչումին տէր հայ սկաուտ, նաեւ կերտեց հայրենասէր ու տիպար հայ մարզըր», ընդգծեց եղբ. Քէչիչեան:

Եղբ. Քէչիչեան շեշտեց, որ այս բոլորը կատարելը դիւրին չէր, այլ իրագործուեցաւ յայտնի ու անյայտ հերոսներու, գործիչներու, դեկավարներու, անդամներու, մարզիկներու եւ սկաուտներու ճիգով ու յարատեւ աշխատանքով՝ իւրաքանչիւրը իր մարզին մէջ: «Յաջորդական սերունդներ իրենց անհատական թէ հաւաքական ջանքերով ու քրտինքով արձանագրած են բազմաթիւ նուաճումներ՝ կառչած մնալով անցեալէն ժառանգուած ըսկզբունքային ար-

ժէքներուն: Սակայն չի բաւեր հարուստ ու փառապանծ պատմութիւն մը ժառանգել, պարտաւոր ենք այդ պատմութիւնը աւելի եւս հարստացնել մեր իրագործումներով», հաստատեց ան:

Շարունակելով, եղբայրը դիտել տուաւ, որ նորանոր մարտահրաւէրներուն ու դժուարութիւններուն դիմաց պէտք է տէր կանգնիլ ժառանգին, պահել ու պահպանել աւանդը, պէտք է կրկնապատկել մեր ճիգերը, որպէսզի կարելի ըլլայ այդ բոլորը փոխանցել «արի ու չարքաշ հայ սկաուտին, ազնիւ մարզիկին եւ խոնարհ ու առաքինի միութենականին, որոնք իրենց գործ-


նական ներդրումը պիտի ունենան Հ.Մ.Ը.Մ-ի աւելի հզօրացման ու Սփիւռքի, Հայաստանի եւ Արցախի մէջ հայ ժողովուրդի յառաջդիմութեան՝ ի խնդիր հայ ուժի ամրապնդման եւ մեր վախճանական նպատակներուն իրագործման»:

Այս առիթով եղբ. Քէչիչեան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակի սեմին նման ձեռնարկի մը կազմակերպումը գնահատելի նախաքայլ մըն է Լիբանանի ընտանիքին կողմէ գործադրելի շարք մը տօնակատարութիւններու:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Քէչիչեան հաստատեց, որ կեանքի պայքարին մէջ Հ.Մ.Ը.Մ-ը վճռական է շարունակելու իր պայքարը:

Օրուան պատգամէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի նուիրուած երգերով հանդէս եկան Հրաչ Կայծակեան, Սարօ Փանոսեան, Սերօ Յակոբեան եւ Վիգէն Տիշչէֆէնեան, իսկ Գառնիկ Սարգիսեան մեկնաբանեց սուրիահայութեան նուիրուած իր նորագոյն երգը:





Եզրափակիչ խօսքը արտասանեց Նորայր Եպս. Աշրգեան: Ան գնահատեց բոլոր անոնք, որոնք նման ձեռնարկի մը կազմակերպման նախաձեռնած են եւ հաստատեց, որ իր ծննդեան առաջին օրէն Հ.Մ.Ը.Մ-ի նպատակը եղած է ծառայել ազգին ու հայրենիքին, ուստի ան եղաւ կառոյց մը, որ հաստատ մնաց իր առաքելութեան



մը զաւակներն են, որոնք իրաւատէր ու պահանջատէր կը մնան մինչեւ որ Արարատը տուն բերեն: Սրբազան հայրը իր խօսքը եզրափակեց յարգանքի արտայայտութեամբ՝ հանդէպ իրենց կեանքը միութեան համար ընծայաբերած անձերուն, որոնք միութեան անունը բարձր պահեցին եւ սերունդներու կերտման մէջ իրենց մեծ ներդ-

Տօնակատարութեան ելոյթ կ'ունենան երգիչներ Սարո Փանոսեան, Սերոբ Յակոբեան, Վիգէն Տիշչէքեան, Հրաչ Կայծակեան եւ Գառնիկ Սարգիսեան:

մէջ, հանդիսացաւ իւրապատուկ դպրոց, հայակերտման ու ազգակերտման ամբողջ: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ին մաս կազմողը կը գիտակցի, որ հայրենիքին ու ազգին ծառայելը պարտակա-

նութիւնն է, այլ՝ պարտաւորութիւն, պարտք է, այլ՝ պատիւ: Միութեան շարքերուն մէջ սերունդներ կը սորվին, որ իրենք Յեղասպանութեան ենթարկուած, սակայն յարութիւն առած ազգի

րումը ունեցան: Հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ-ի 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին որոշումով, վերահաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 300 տոլար եւ աւելի կը նուիրեն թերթին բարգաւաճման ծրագիրներուն:

- «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-
- ԼԻՔԱՆԱՆԵՆ Տէր եւ տիկին Գրիգորիս Պողարեան, Նուպար Սոֆեան:
- ԱՐԵԻԵԼԵԱՆ Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐԷՆ Պետիկ Տէր Վարդանեան, Սարգիս Ապրիմեան:
- ՅՈՐԴԱՆԱՆԵՆ Ծործ Տարսեան:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԶԶԵՌՆՈՒԹԻՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ)

Թղթակից ԱՆԹԻԼԻԱՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղի սկաուտական շարքերուն եւ խրմբապետական կազմին կազմակերպութեամբ, Դեկտեմբեր-Յունուար ամիսներուն տեղի ունեցաւ տօնական օրերու բարեսիրական յատուկ աշխատանք: Առաջին անգամը չէր, որ նմանօրինակ աշխատանք մը կը կատարուէր մասնաճիւղին մէջ, սակայն այս անգամ նպատակն էր սկաուտական բոլոր խումբերը, անոնց ծնողներն ու բարեկամները, ինչպէս նաեւ շրջանի հայութիւնը կարելի եղած չափով մասնակից դարձնել այս աշխատանքին, որպէսզի արտակարգ աշխատանքէ մը աւելի, այս գործունէութիւնը բոլորը մղէ մնայուն կերպով բարեսիրական նախաձեռնութիւններ կատարելու:

Դեկտեմբերի առաջին շաբաթէն իսկ շրջաբերականներով, համացանցի վրայ գետեղուած ծանուցումներով եւ անձնական միջոցներով, սկաուտներ տեղեկացուցին իրենց շրջապատն ու բարեկամները, թէ ծրարագրած են կատարել «Սկաուտը միշտ օգնող» անունով բարեսիրական աշխատանք մը: Պատրաստուեցաւ նուէրներու ցանկ մը, որուն հիմամբ հաւաքուեցան օժանդակութիւններ: Թէ՛ ծնողներուն եւ թէ՛ բարեկամներուն քաջայերանքն ու սրտագին մասնակցութիւնը խրախուսիչ եղաւ սկաուտներուն համար: Շուտով կարելի եղաւ հաւաքել ուտեստեղէն, խաղալիք, հագուստ, կօշիկ, տան անհրաժեշտ առարկաներ, անկողին, մահճակալ, վառարան եւ այլն:



Իւրաքանչիւր սկաուտ իր կարելիութեան սահմաններուն մէջ օժանդակութիւն մը ապահովեց: Ոմանք այցելեցին իրենց դրացիներուն եւ օժանդակութիւններ հաւաքեցին, ուրիշներ իրենց զանձնակի դրամով խաղալիք գնեցին, իսկ ոմանք ալ դիմեցին իրենց ծնողներուն եւ ազգականներուն, որպէսզի իրենց խանութներէն առարկաներ տրամադրեն: Արեւուշական խումբը շրջանին մէջ կարկանդակի վաճառք մը կատարելով ապահովեց կոկիկ գումար մը, որուն շնորհիւ կարելի եղաւ որոշ գոյքեր գնել:

Աշխատանքը ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերա-բժշկական կեդրոնի ընկերային ծառայութեան գրասենեակին հետ համագործելով, սկաուտներ ճշդեցին երեք կարիքաւոր ընտանիքներ՝ անոնց օժանդակութիւններ տրամադրելու համար: Ակումբին մէջ աշխատանքը բաժնուեցաւ խումբերու: Փոքրերը պատրաստեցին տօնական օրերու բարեմաղթութեան բացիկներ, իսկ արե-





նոյնները դասաւորեցին ստացուած օժանդակութիւնները:

30 Դեկտեմբեր 2012-ին, Ամանորի նախօրեակին, արեւոյշներէ եւ արիւններէ բաղկացած երեք խումբերը այցելեցին ընտանիքներուն եւ յանձնեցին նուէրներն ու Ամանորի գիշերուան յատուկ ընթրիք մը: Սկառուտները լսեցին ընտանիքներուն մտահոգութիւններն ու դժուարութիւնները, խաղացին փոքրերուն հետ եւ անոնց մաղթեցին լաւ տարի մը:

Ակումբ վերադարձին, անդամները մեծապէս ազդուած էին եւ իսկապէս հասկցած իրենց կատարած աշխատանքին կարեւորութիւնն ու անոր իսկական խորհուրդը: Նոյն օրն իսկ, սկառուտ մը խմբապետական կազմին հետ կապուելով, տեղեկացուց, թէ իր ընտանիքը կը փափաքի յաւելեալ օժանդակութիւններ ուղարկել իր այցելած ընտանիքին, իսկ այլ սկառուտ մը կապուեցաւ բարեկամներու եւ ապահովեց անհրաժեշտ կահ կարասի: Հետեւաբար, ծրագրուեցաւ աշխատանքի երկրորդ հանգրուան մը: 26 Յունուար 2013-ին, մասնաճիւղին



երէցական փաղանգը գոյքերն ու կահ կարասին փոխադրեց երեք ընտանիքներուն տունները՝ այսպիսով աւարտելով բարեսիրական աշխատանքին վերջին բաժինը:

Այս մասին արեւուշական խումբէն քոյր Նարոտ Քէչէպաշեան կը վկայէ: «Շատ յուզուեցայ, երբ աշխատանքի սկսանք. նախ փառք տուի Աստուծոյ եւ գործի լծուեցայ: Աւելի ուշ, երբ իրենց ուրախութիւնը տեսայ, շատ աւելի յուզուեցայ եւ ծրագրեցի ասկէ ետք առնուազն տարին անգամ մը օգնել կարիքաւոր ընտանիքներու, հաւատարիմ մնալով սկառուտական դաւանանքի կէտերէն մէկուն՝ «միշտ օգնել ուրիշին»:

12-ամեայ Նարոտ Մերթիսանեան կը նշէ. «Չափազանց յուզուած եւ ազդուած՝ տուն վերադառնալէս յետոյ որոշեցի կարողութեանս սահմաններուն մէջ օգտակար դառնալ այդ ընտանիքին: Նաեւ անդրադարձայ, թէ միշտ պէտք է շնորհակալ ըլլալ Աստուծոյ եւ կեանքի մէջ չնեղուիլ անիմաստ պատճառներու համար»:

Այսպիսով, հաւատարիմ մնալով ըսկառուտական դաւանանքի կէտերուն եւ մեկնելով Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի խմբապետական կազմին եւ սկառուտներուն ցանկութենէն եւ համագումբէն, «Սկառուտը միշտ օգնող» ծրագիրը պիտի չըլլայ արտակարգ գործունէութիւն մը, այլ պիտի կրկնուի յաճախ: Չատկուան առիթով սկառուտները պիտի կրկնեն վերոյիշեալ աշխատանքը՝ փորձելով աւելի ընդլայնել մասնակիցներուն ծիրը, որպէսզի կարելի ըլլայ օժանդակել աւելի մեծ թիւով կարիքաւոր ընտանիքներու:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Թղթակից ԿԼԵՆՏԵՅԼ

Հինգչաբթի, 14 Փետրուարին, Հայց-Առաքելական եկեղեցին տօնեց Քրիստոսի տաճար ընծայման յիշատակը՝ Տեառնընդառաջը: Նախատօնակին, 13 Փետրուարի երեկոյան, Արեւմտեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Կլէնտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց եւ ուղղեց հոգեւոր պատգամ մը: Արարողութեան ներկայ եղան եւ կարգապահութեան հսկեցին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, արենոյշներն ու խմբապետները:

Եկեղեցական եւ ժողովրդային արարողութիւններէն ետք, եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան հիւրընկալութեամբ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, որ Առաջնորդին կողքին ընթրիքի սեղանին շուրջ համախմբեց Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական ներկայացուցիչները՝ թիւով շուրջ 100 ներկայներ: Ընթրիքի ընթացքին, խմբապետներ ներկայացուցին սկաուտական իրենց կազմերը եւ Սրբազանին նուիրեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը խորհրդանշող յուշանուէր մը: Այս առթիւ սրտի խօսքեր արտասանեցին հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Վազգէն Քհնյ. Աթմաճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Զարեհ Մարգարեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Ռիմա Պողոսեան եւ Երջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Թային Հինտոյեան:



Փակման խօսքին մէջ, Առաջնորդը բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ առաքելութիւնը եւ այս առիթով սկաուտներուն նուիրեց գունազարդ «Հայր Մեր»ներ եւ յատուկ պատգամ մը ուղղեց ներկաներուն. «Հ.Մ.Ը.Մ.ի համար գեղեցիկ աւանդութիւն դարձած Տեառնընդառաջի տօնակատարութեան եւ եկեղեցական արարողութեանց ձեռնարկը մասնակցութիւնը ցուցանիչ մըն է Հ.Մ.Ը.Մ.ի ջամբած այն դաստիարակութեան, որ հայ պատանին եւ պարմանուհին մասնակից եւ հաղորդակից կը դարձնէ ազգային եկեղեցական արժէքներու եւ աւանդութիւններու: Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն ներս, դուք ազնիւ հոգիով եւ առողջ մարմինով կ'աճիք եւ

աւելի պիտի աճիք, հասակ առնէք, զարգանաք եւ դառնաք մեր ապագայ ծնողները, նուիրեալ ղեկավարները եւ դիտակից հայերը ու ծառայէք մեր մեծ ընտանիքին՝ հայ ժողովուրդին: Յաջողութիւն եւ Աստուած օրհնէ ձեզ ու ձեր դաստիարակ առաջնորդները, որպէսզի միշտ դէպի յառաջ, բարձրին, կատարեալին ու գեղեցիկի յաղթանակին ընթանաք», ըսաւ ան:

Երեկոն վերջ գտաւ «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ»ով:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Տեր եւ Տիկ. Գրիգորիս Պողարեան 300 \$

ՍՏԱՅԱՆՔ

«ԻՐԱՆԱՅԱՅ ԱՆՈՒԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ԱԼՖՐԷԴ ՅԱԲԱՆ

«Նայիրի» հրատարակչութիւն, Թեհրան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԼԵՆՏԷՅԼԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻ ՊԱՐԳԵԲԱՏՐՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Անոյշ Ալեքսանեան-Յովեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Կիրակի, 3 Մարտի կէսօրից յետոյ ժամը 2-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի «Պաղտասարեան-Շահինեան» սրահում, «Արի 4» խմբի ըսկաուտներ Լէօ Ալեքսանեանը, Էտրիան Հայրապետեանը, Ալեքս Ռոսսին եւ Արմէն Ղազարեանը պարգեւատրուեցին «Արծուիկ» (Eagle Scout) կարգի աստիճանով:

«Արծուիկ» կարգը ամերիկեան սկաուտական կեանքի ամէնէն իւրայատուկ ծրագիրն է, որ միայն արիները կարող են նուաճել այդ դժուարին փորձութիւնները՝ այն էլ միայն մինչեւ 18 տարեկան: «Արծուիկ» կարգը համարուում է սկաուտական բարձրագոյն աստիճանը, որ մեծ յարգանք եւ պատիւ է վայելում ամերիկեան եւ այլ շրջանակներում:

Խնամուած, նպատակասլաց եւ խոստմնալից միջոցառում էր Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի սկաուտական կազմակերպութիւնը, երեք տարի է ինչ համագործակցում է ամերիկեան Eagle Court Honor սկաուտական կազմակերպութեան հետ: Այս տարի բախտն ունեցայ ներկայ գտնուելու պարգեւատրման պաշտօնական սոյն իւրայա-



տուկ արարողութեան: Հետաքրքիր էր քաջալերական յայտագրի խորհուրդը: Սահուն, ուշագրաւ եւ մտածուած ներկայացումով բեմ առաջնորդուեցին պարգեւատրուող արիների ծնողները եւ գնահատուեցին իրենց զաւակների կողքին:

Չորս արիները իրենց ելոյթով բեմից հանդիսասրահ էին յորդում՝ Ընտանիք, Միութիւն, Պատիւ եւ Գործունէութիւն խորհուրդը՝ «Բարձրացիր-բարձրացուր» սկաուտական կարգախօսը իմաստաւորելով: Ներկայ էին Կոմիտաս Քհնյ. Թորոսեանը, Էտրմ Շիֆի ներկայացուցիչը, Կլէնտէյլ քոլէճի ոստիկանապետները, միութիւնների եւ մամլոյ ներկայացուցիչներ, ամերիկեան եւ հայկական բարձրաստիճան արի-արեւոյշներ ու մեծ թիւով հիւրեր: Իմաստալից արարողութեամբ բազմաթիւ գնահատագիրներ եւ շքանշաններ յանձնուեցին ու փոխանակուեցին պարգեւատրուող եւ բեմում կանգնած ծնողների միջեւ: Ոգեւորիչ էր բացման ու փակման դրօշակի արարողութիւնը, որ Կոմիտաս Քահանայ Թորոսեանի ազօթքով դարձաւ աւելի տպաւորիչ: Ներկաները յոտնկայս անվերջանալի ծափահարութեամբ գնահատեցին երիտասարդ ու խոստմնալից արիներին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ Կ'ԱՅՑՑԵԼԵՆ «ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆ»



ՀՄԸՄԻ Լոս Անճելլոսի մասնաճիւղի աւանդութեան վերածուած «Արարատ տուն» տարեկան այցելութիւնը այս տարի տեղի ունեցաւ Կիրակի, 24 Փետրուարին:

ՀՄԸՄԻ Լոս Անճելլոսի մասնաճիւղէն 60 սկաուտներ եւ ծնողական օժանդակ մարմինէն անդամներ այցելեցին Միչըն Հիլզի մէջ գտնուող հայ տարեցներու տունը՝ իրենց տատիկներն ու պապիկները զուարճացնելով, անոնց հրամցնելով հայկական երգեր, պարեր, սկաուտական կանչեր եւ բանաստեղծութիւններ:


Դաշնակի վրայ մենակատարութիւն մը հրամցուց Քրիսթիան Փրիմ:

Գեղարուեստական յայտագիրի աւարտին, սկաուտները առիթը ունեցան զրուցելու այս այցելութենէն բացայայտօրէն գոհ մնացած տարեցներուն հետ՝ աւելի մօտէն ծանօթանալով անոնց:



with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ. Ի ԱԹԷՆՔԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

Ներկայ մը ԱՐԹԵՆՔ

4 Փետրուարին, Ֆիքսի «Աւետիքեան» վերանորոգուած սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ի Աթէնքի մասնաճիւղին տարեկան ձեռնարկը, ներկայութեամբ շրջանի հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ. Շահինեանի, Հ.Մ.Ը.Մ. Ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ Գոքինիոյ մասնաճիւղի անդամներու, Հ.Մ.Ը.Մ. Ի պատուակալ նա-

խագահ եղբ. Կարպիս Գուլյումեանի, Հ.Յ.Դ. Ֆիքսի Կոմիտէի, Հ.Կ.Սաչի Ֆիքսի «Ռուբինա» մասնաճիւղի եւ Նէոս Գոգմոսի Ս. Կարապետ եկեղեցւոյ Թաղային մարմնի անդամներու, սկաուտներու, մարզիկներու եւ համակիրներու:

Զեռնարկին բացումը կատարեց եղբ. Արլէն Ղեւոնդեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ. Ի համաշխարհային կառույցի 95-ամեայ պատմութեան:

Ապա, Հ.Մ.Ը.Մ. Ի Յունաստանի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Յովակիմեան ներկաները ողջու-




նելով՝ կոչ ուղղեց ծնողներուն իրենց զաւակները վստահելու Հ.Մ.Ը.Մ. Ին:

Հ.Մ.Ը.Մ. Ի Աթէնքի մասնաճիւղի ատենապետ եղբ. Ֆիլիփ Ծերոնեան անդրադարձաւ վարչութեան աշխատանքներուն եւ մարզական խումբերու կացութեան: Ներկայիս մասնաճիւղը, բացի սկաուտական միաւորէն, ունի ճատրակի, հեծելանիւի, լողի խումբեր, ինչպէս նաեւ՝ Ֆուլթպոլի եւ պասքէթպոլի երէցներու, միջակներու եւ փոքրերու խումբեր:

Հ.Մ.Ը.Մ. Ի Աթէնքի սկաուտական աւագ խմբապետ եղբ. Օննիկ Աւագեան այս առիթով փոխանցեց բարեմաղթանքներ: Մաղթանքներ փոխանցեցին նաեւ Ֆուլթպոլի եւ պասքէթպոլի խումբերու պատասխանատուները:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս տեղի ունեցան պարզեւատրումներ: Մասնաճիւղի վարչութեան որոշումով





պարգևատրուեցան ֆուլթայուլի եւ պաս-քեթպուլի երկու մարզիկներ, որոնք տարիներ շարունակ մաս կազմած են Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն եւ տարեշրջանի աւարտին տարիքի բերումով կը դադրին: Պարգևատրուողներու շարքին էին քոյր Ակնէս Թոքաթլեան-Սրապեան՝ իբրեւ վեթերան մարզիկ Հ.Մ.

Ը.Մ.ի Աթէնքի աղջկանց խումբին: Ան երկար տարիներ իր գործօն մասնակցութիւնը բերած է շրջանի սկաուտական ծնողական յանձնախումբին: Պարգևատրուեցան նաեւ Կարօ եւ Սիլվա Մովսէսեաններ, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու ֆուլթայուլի եւ պասքեթպուլի բոլոր մրցումներուն իրենց

մնայուն ներկայութեան համար:

Պարգևատրումները կատարուեցան հետեւեալ ձեւով.- Եորղօ Գոստարիտիսի պարգևատրումը կատարեց եղբ. Յարութ Օհանեան, Ալեքսի Ապաթիսի՝ եղբ. Յովիկ Տէր Յովակիմեան, քոյր Ակնէս Թոքաթլեան-Սրապեանի՝ եղբ. Կարպիս Պէքէրէճեան, Մովսէսեան ամուլին՝ եղբ. Ֆիլիփ Ծերոնեան: Պասքեթպուլի խումբին մարզիկները իրենց ստորագրութիւնները կրող գնդակ մը նուիրեցին եղբ. Սերգօ Եթիմեանին, որ այս տարի դադրեցաւ մրցումներու մասնակցելէ:

Ձեռնարկին փակման խօսքը արտասանեց Նարեկ Քհնյ. Շահինեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ բարեմաղթութիւններ փոխանցեց: Աւարտին, քահանայ հայրը օրհնեց զաթան, որ կտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գույումճեանի կողմէ:

Խանդավառ մթնոլորտի մէջ յաջորդեց հիւրասիրութիւն:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ ԱՐՄԱԻՒՐԻ ՄԷՋ

Թղթակից ԱՐՄԱԻՐ



15 -16 փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արմաւիրի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ համակարգչային գիտելիքներու ուսուցման երկօրեայ սեմինար, մասնակցութեամբ Արմաւիրի եւ էջմիածինի սկաուտներու:



Սեմինարին ընթացքին ըսկաուտներ ծանօթացան արհեստագիտական նորութիւններու եւ ամրապնդեցին իրենց ծանօթ կարգ մը գիտելիքներ: Աւարտին, մասնակիցներուն տրուեցան հաստատագիրներ:

ԱՐՄԱԻՐԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ՄԻԱՅԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ

20 փետրուարին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արմաւիրի միաւորի սկաուտները համացանցային հաղորդակցութեամբ (Skype) միացան Յունաստանի սկաուտներու նախաձեռնութեան եւ կապ հաստատեցին այդ պահուն հաղորդակցող 40 երկիրներու սկաուտներուն հետ:

Արմաւիրի սկաուտները համացանցով ողջունեցին աշխարհի սկաուտները եւ, ինչպէս կը պահանջուէր, հնչեցուցին կանչ մը, որուն արձագանգեցին յոյները: Թէեւ այս բոլորը միայն 5 վայրկեան տեւեց, սակայն ան յատկանշուեցաւ իր ջերմութեամբ եւ հաճելի մթնոլորտով:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. առաջին անգամն էր որ կը մասնակցէր նման նախաձեռնութեան մը: Արմաւիրի սկաուտները հպարտ են որ հայկական սկաուտութիւնը ներկայացուցին աշխարհի սկաուտներուն:



ՎԱՐՊԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱՌՆԱՅԻ ՄԱՄՆԱՃԻԴԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Թղթակից ՎԱՌՆԱ

7 Փետրուարին, Վառնայի մէջ հանդիսաւոր շուքով նշուեցաւ Վարդանանց տօնը: Աւանդութեան համաձայն, այդ օր Վառնայի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, իբրեւ Վարդան Մամիկոնեանի զաղափարները կրողներ եւ անոր սրբազան արժէքները պահպանողներ, ամէն տարի կը նշեն իրենց ուխտին վերանորոգման տօնը:

Վառնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, Բարթողիմէոս ՔՏՆՅ. Յակոբեան Վարդանանց տօնին առիթով մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ: Իր հոգեշունչ քարոզին մէջ, ան խօսեցաւ Վարդան Մամիկոնեանի կատարած անմահ գործին՝ յանուն հաւատքի պահպանման եւ յանուն հայրենիքի ազատութեան իր կեանքը նուիրելու մասին: Այս առիթով ան նշեց. «Ինչպէս որ Սուրբ Վարդան Մամիկոնեան ամբողջ ժողովուրդ մը իր կեանքին գնով գերծ պահեց օտարամուտութենէն, օտար կրօնքին ու մշակոյթին թափանցումէն, նոյնպէս ալ այսօր, Սուրբ Վարդանանց տօնին պէտք է ինդրենք սուրբին բարեխօսութիւնը մեզմէ իւրաքանչիւրին համար, որպէսզի Աստուած միշտ մեր մէջ վառ պահէ Սուրբ Վարդան Մամիկոնեանի ոգին, որպէսզի մենք ալ պայքարինք ամէն տեսակ օտարամուտութեան դէմ ու մայր հայրենիքէն հեռու կարողանանք սրբօրէն պահել մեր կրօնքն ու մշակոյթը»:



Պատարագէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները տեղույն կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհի Վարդուհի Խաչիկեանի նախաձեռնութեամբ կազմակերպեցին ոգեկոչական ձեռնարկ՝ նուիրուած Վարդանանց յիշատակին: Անոնք եկեղեցւոյ մէջ ներկայացուցին Վարդանանց պատմութիւնը, որմէ ետք ստացան քահանայ հօր օրհնութիւնը: Քահանայ հայրը ի մասնաւորի շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Վառնայի մասնաճիւղի ատենապետ եղբ. Խաչիկ Մանկիկեանը, աւագ խմբապետ եղբ. Կարէն Պէյլէրեանը եւ մասնաճիւղի բոլոր անդամները՝ մաղթելով, որ անոնք իրենց հոգիներուն մէջ միշտ վառ պահեն Սուրբ Վարդան Մամիկոնեանի ոգին անմար կրակը:

Պատարագէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները տեղույն կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհի Վարդուհի Խաչիկեանի նախաձեռնութեամբ կազմակերպեցին ոգեկոչական ձեռնարկ՝ նուիրուած Վարդանանց յիշատակին: Անոնք եկեղեցւոյ մէջ ներկայացուցին Վարդանանց պատմութիւնը, որմէ ետք ստացան քահանայ հօր օրհնութիւնը: Քահանայ հայրը ի մասնաւորի շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Վառնայի մասնաճիւղի ատենապետ եղբ. Խաչիկ Մանկիկեանը, աւագ խմբապետ եղբ. Կարէն Պէյլէրեանը եւ մասնաճիւղի բոլոր անդամները՝ մաղթելով, որ անոնք իրենց հոգիներուն մէջ միշտ վառ պահեն Սուրբ Վարդան Մամիկոնեանի ոգին անմար կրակը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ԿԻՊՐՈՍԻ ՄԱՄՆԱՃԻԴԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ Կ'ԻՐԱԳՈՐԾՈՒԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

25 Դեկտեմբեր 2012-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի կիպրոսի մասնաճիւղի տարեկան պարահանդէսը՝ աւելի քան 250 մասնակիցներով: Խանդավառ երիտասարդները մինչեւ առաւօտեան ժամերը պարեցին եւ զուարճացան Նունէ Եսայեանի եւ Հրաչ Կայծակեանի երգերով:



Իրենց ներկայութեամբ պարահանդէսը պատուեցին կիպրական ՏԻԿՈ կուսակցութեան նախագահ Մարիոս Կարոյեան, Ստրովոլոսի քաղաքապետ Լազարոս Սաւիտիս, պետական ներկայացուցիչ Տէր եւ տիկին Վարդգէս Մահտեսեան եւ Հ.Յ.Դ. տեղուոյն Կոմիտէի ներկայացուցիչ տէր եւ տիկին Արթո Դաւիթեան:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՕՆԱԿԱՏԱՐԵՑ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Թղթակից
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Արժանի ճանապարհորդները յուզումով եւ ուրախութեամբ տօնակատարեց հայ սկաուտութեան 100-ամեակը Պուէնոս Այրէսի «Էտոլարտո Սէֆէրեան» ակումբի սրահներէն մէկուն մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին: Տօնակատարութեան բացումը կատարեցին պատկերասփիւռի հռչակաւոր լրագրող, խօսնակ Լուիս Օթերո եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներէն եղբ. Կարո Սէֆէրեան՝ սպաներէն եւ հայերէն լեզուներով:

Յատուկ մասնակցութիւն ունեցաւ Արժանի սկաուտական կազմակերպութեան անդամ, Արժանի ազգային խմբապետ Խերարտո Մաթթէ, որ ներկայ գտնուեցաւ գանձապահ Գարլոս Ֆարինայի եւ խորհրդատու Քլաուտիո Սերէպոնէի ընկերակցութեամբ: Ձեռնարկին ներկայ եղան Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Մելիքեան, Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» ըսկաուտական խումբի փոխ խմբապետ քոյր ժէսիքա Աշարճեան, Միխիթարեան միաբանութեան «Ս. Վարդան» սկաուտական խումբի խմբապետ Կիթերմօ Մերտինեան եւ Հ.Բ.Ը.Մ.ի «Անդրանիկ» սկաուտական խումբի խմբապետ Գարլոս Խաչիկեան: Իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հունգարիոյ, Ուքրանիոյ, Լեհաստանի սկաուտական խումբերու, «Սան Փաթրիսիո», «Սան Մարթին Տէ Թուրս», «Սան Ֆրանսիսքօ Խաւիէր», «Պէնիթօ Մենա», «Սան Իկ-



նասիօ Տէ Լոփոլա» սկաուտական խումբերու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Արժանի սկաուտական շրջաններու խմբապետներ՝ Գարլոս Փերէս Սիպէս եւ Սիլվիօ Գանալէ:

Արժանի եւ Հայաստանի քայլերգներու երգեցողութենէն ետք, ցուցադրուեցան երեք տեսերիզներ, պատրաստուած Աննա Կապրիէլա Օհաննէսեանի, Վարդուշ Ազաբրահամեանի եւ Ալէքս Գաբրիանեանի կողմէ: Տեսերիզները ներկայացուցին Արժանի եւ Հայաստանի սկաուտութեանց պատմականը, գործունէութիւնը եւ Մար Տէլ Փլաթայի ու Բիւրականի բանակումները: Առաջին տեսերիզը ներկայացուց հայ սկաուտութեան առաջին փորձառութիւնները՝ Լորտ Պէյտըն Փաուրլիի հիմնադիր քայլերէն հազիւ քանի մը տարի ետք:

Այս առիթով խօսք առաւ Արժանի սկաուտական կազմակերպութեան անդամ, Արժանի ազգային խմբապետ Խերարտո Մաթթէ, որ հետաքրք-

րական գաղափարներ փոխանցեց իր կազմակերպութեան եւ հայութեան մասին: Ան ի միջի ալլոց յայտնեց. «Այսօր, 24 Հոկտեմբեր, խոր յուզումով կ'ապրինք հայ սկաուտութեան 100-ամեակը: Հարկ է յայտնել, որ Արժանի սկաուտութիւնը իր մէջ կը ներառնէ հայկական չորս սկաուտական խումբեր, որոնց կարգին՝ «Արարատ» սկաուտական խումբը, որ մեզ եղբայր դարձնող անվիճելի արժէքները կը համախմբէ: Մենք կը ցանկանք ձեզ տեղեկացնել, թէ որքա՛ն կարեւոր է այս տօնակատարութիւնը Արժանի սկաուտութեան համար: Մենք սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք հայ համայնքի բոլոր անդամներուն, որոնք անցեալին, ներկայիս եւ ապագային մաս կազմած են ու պիտի կազմեն սկաուտութեան... Այդ սկզբունքներուն հիմամբ, մեր փափաքն է շարունակել միասնական աշխատանքը, ի նպաստ մեր երկիրը բնակող մանուկներուն եւ երիտասարդներուն, զանոնք դաստիարակելով, որպէսզի դառ-



ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԵՐԴՈՒՄԸ

(ՀԱՅ ՍԿԱՆՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ, ՀՄԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂՔ. ԳԱՐԼՈՍ ՍԷՅՖԻՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ)

Կ'ապրինք յուզիչ պահ մը: Թէեւ այս մէկը կրնայ նկատուիլ ազգի մը պատմութեան 100-ամեակին նշումը, սակայն հայ սկաուտութեան պատմութեան մէջ կենսական էջ մըն է ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով կը փոխանցեն մեր շնորհաւորութիւնները եւ երախտագիտութիւնը առաջին հերթին կազմակերպութեանս Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ 100-ամեակի Յանձնախումբին: Բոլորս գիտենք, որ երբ կը սկսինք մաս կազմել սկաուտութեան, առաջին օրերը եւ շաբաթները փոփոխութիւններու կ'ենթարկուինք:

Երբ սկաուտական երդման արարողութեան պահը մօտենայ, Հայաստանի պատմութեան վերջին դարը կը յիշատակենք՝ Յեղասպանութեան, անկախութեան, Սփիւռքի եւ հայրենադարձութեան նման դէպքերով: Անկասկած, կրնանք յայտնել, թէ անգամ մը եւս ճակատագրի մեր ճգնաժամային պահերէն մէկուն առջեւ կը գտնուինք՝ մտահոգուած Սուրիոյ մեր հայրենակիցներով, մեր քոյր-եղբայրներով: Դժուար ժամանակներ են, եւ հպարտութեամբ կրնանք վկայել Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մեր մարզիկներուն եւ սկաուտներուն ունեցած դերակատարութեան մասին: Անոնք կ'ապահովեն բնակչութեան կարիքները, մարդկային օժանդակութիւն հասցնելով ամէնուրեք, առանց խտրութեան: Այս մասին տեղեկացած ենք մամուլէն, վիտէոներու եւ համացանցի միջոցով:

Այս պայմաններուն մէջ կոչ կ'ընենք սկաուտներուն, անոնց որոնք ներկայիս շարքերուն մէջ են կամ անոնց որոնք եղած են անցեալին, բոլորին, որպէսզի հպարտութեամբ վերահաստատեն իրենց երդումը՝ հայ ազգին ծառայելու: Այսպէս, յաջորդ սերունդներուն կը փոխանցենք մեր պատգամը, նոյն ձեւով ինչպէս որ եղած է վերջին հարիւր տարիներուն ընթացքին:

Բոլոր հայ սկաուտներուն կը մաղթեմ որ շուտով կարենան իրենց երդումը վերանորոգել Արարատ լեռան առջեւ, բախտաւոր օր մը իր ազատագրուած լանջին կատարելու 200-ամեակի մեր բանակումը:

Նան օրինակելի քաղաքացիներ, ու պատրաստ ըլլան ներկայ եւ ապագայ մարտահրաւէրները յաղթահարելու, տարածելով մեր սիրելի Պէյքալըն Փաուըրլի գործը»:

Շարունակելով, Մաթթէ Հաստատեց. «Կը փափաքեմ երկու կէտ եւս աւելցնել: Առաջինը՝ Արժանթինի ըսկաուտութեան յանձնառութիւնը՝ ձեր

առաջարկով Ազգային Համայնքներու Համախմբումի մը ստեղծման, ինչ որ պիտի համախմբէ զանազան համայնքներու պատկանող սկաուտներ: Երկրորդը՝ անձնական երախտագիտութիւնս ձեր բոլորին: Հայաստանի եւ Արժանթինի միջեւ գոյութիւն ունեցող 14-057-76 քիլոմետրի հեռաւորութիւնը պարզապէս փոքր խոչընդոտ մըն է,



տրուած ըլլալով որ Հայաստանի եւ Արժանթինի սկաուտները երկու ազգերու միջեւ գոյութիւն ունեցող եղբայրական կապերուն հիմնաքարերը եղած են, են եւ պիտի ըլլան»:

Ապա, ՀՄԸՄ-ի «Արարատ» ըսկաուտական խումբի ստեղծման տեսերիզի ցուցադրութենէն ետք, խօսք առաւ փրոֆ. Քրիստինա Հ. Թադէոսեան, որ ի միջի այլոց յայտնեց. «... Բոլորիս ծանօթ է Թուրքիոյ կողմէ գոր-

ծաղրուած Յեղասպանութիւնը (1915-1923), որուն հետեւանքով մէկ ու կէս միլիոն հայեր զոհ գացին համաշխարհային Ա. պատերազմին. անոնցմէ հրաշքով փրկուածները աւելի ուշ պիտի վերադառնային իրենց կեանքին, ահագին կարիքներով ու դժուարութիւններով, նիւթական, ֆիզիքական ու հոգեկան օժանդակութեան կարօտով:

«Պատերազմի նախօրեակին, Պոլսոյ մէջ, խումբ մը հայ երիտասարդներ,

ՇԱՄՏ ՏԱՐԻՆԵՐՈՒ...

Հայ սկաուտութեան 100-ամեակի տօնակատարութիւնը առիթ տուաւ զանազան զգացումներու եւ յուզումներու:

Մեր կեանքին ընթացքին սկաուտական շարժումին հետ կապ ունեցող անձերուն հետ անգամ մը եւս հանդիպիլ, անցեալի տարիները վերյիշել, պապենական ծրագրի մը շարունակութիւնը յաջողցնելու գոհունակութիւնը ապրիլ, նոր սերունդի գործունէութիւնը եւ նպատակներու իրագործումը տեսնել, այդ բոլորը առաւել փայլք տուին տօնակատարութեան:

Այս բոլորը կրկնակի իմաստ կը ստանան, երբ նկատի կ'ունենանք թէ ի՞նչ կը նշանակէ սկաուտութիւն հայերու համար, ի՞նչ կը նշանակէ սկաուտութեան պահպանում Սփիւռքի մէջ: Մեր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր», ինչպէս նաեւ բարեսիրութեան, բարեգործութեան, հաւատարմութեան, ազգասիրութեան եւ այլ արժէքներու կարելորդութիւնը, որոնք երբեմն վտանգուած ալ կրնան ըլլալ, նոր յոյսերու, նոր յաջողութիւններու տեղի կու տան մեզի:

Միւս կողմէ, սկաուտական շարժումին մէջ հայ մանուկներու եւ երիտասարդներու կեցուածքը մեզի առիթ կու տայ մտածելու նոր երազներու մասին, որոնք կը միանան մեր ծնողներու եւ մեծ հայրերու երազներուն:

Շա՛տ տարիներու, առ յաւեւ...

ԻԶԱՊԷԼ ԷՕՐԷՆԵԱՆ

ներշնչուած Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ» թերթի գաղափարներէն, 1912 թուականին կազմակերպեցին հայ սկաուտներու խումբ մը, հայկական

վարժարաններու երեխաներով, տարածելով սկաուտական շարժումին գաղափարականը, նպատակները եւ զանոնք յարմարեցնելով հայ ազգի կարիքներուն, օրինակ՝ նոր սերունդներու ազգային դաստիարակութիւն, անոնց ֆիզիքական ու բարոյական պատրաստութիւն, մարզական եւ սկաուտական կազմակերպութիւններու ստեղծում»... ինչ որ հետագային իրականութիւն պիտի դառնար 1918 թուականի Նոյեմբերին, ՀՄԸՄ-ի հիմնադիրներուն ջանքերով:

«ՀՄԸՄ-ը ստեղծուեցաւ Պոլսոյ մէջ, սակայն սկաուտութիւնը Ա. Հանրապետութեան կառավարութեան հրաւէ-



Alberto M. Soreian Photography



ՀԱՅ ԵՒ ԱՐԺԱՆԹԻՆՑԻ ՍԿԱՈՒՏՆԵՐ ԵՂԲԱՅՐԱՑԱԾ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԾԻՐԻՆ ՄԷՉ

Հ.Մ.Ը.Մ.ի Հարավային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդը, որուն կը կազմեն քոյրեր Պէթի Սէֆերեան, Սեսիլիա Տադլեան եւ Նենսի Թադէոսեան, իր գործունեութեան հիմնական նպատակներուն մէջ կարելորութեամբ կը շեշտէ Արժանքինի սկաուտական շարժումին հետ եղբայրական կապերու ամրապնդումը, 2011 թուականի Յունուարին, Պրագիլի Քուրիթիպա քաղաքին մէջ տեղի ունեցած սկաուտական միջազգային խորհրդաժողովին սկիզբ առած յարաբերութեան որպէս շարունակութիւն:



Ժանքինի սկաուտները առիթը ունեցան ներկայ գտնուելու անցեալ Օգոստոսին Բիւրականի մէջ տեղի ունեցած հայ սկաուտութեան 100-ամեակի խորհրդաժողովին, ուր ներկայացուցան Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» սկաուտական խումբի անդամ եղբ. Կարո Սէֆերեանի կողմէ: Սէֆերեան կրեց արժանքներու

պատուիրակութեան սկաուտական փողկապը: Նոյն ձեւով, 1972 թուականին, Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» սկաուտական խումբի հայ սկաուտները ներկայացուցած էին արժանքներու եւ հայկական սկաուտութիւնները ճափոնի մէջ տեղի ունեցած միջազգային խորհրդաժողովին:

Այս ուղղութեամբ, 19 Մայիս 2012-ին, Պուէնոս Այրէսի Ռամոս Մեխիայի Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ բարեկամական ճաշկերոյթ մը, որուն ներկայ եղաւ Արժանքինի սկաուտական շարժումի վարչութեան նոր կազմը՝ սկաուտ խմբապետ Խերարտո Մաթթէ, գանձապահ Գարլոս Ֆարինա, կազմակերպութեան կրօնական խորհրդատուն, վարչականներ Քլաուտիօ Սերեպոնէ եւ Քրիստինա Փանէթթա, նախկին Սկաուտ խմբապետ Մարսելօ Ռիվաս եւ Ռամոս Մեխիայի թիւ 15 շրջանի պետ Տանիէլ Շիվօ: Հանդիպման հրաւիրուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆերեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան եւ «Արարատ» սկաուտական խումբի անդամներ:

Հակառակ Հայաստանի եւ Արժանքինի միջեւ գոյութիւն ունեցող աշխարհագրական հեռաւորութեան, 1912 թուականը յատուկ խորհրդանիշ է երկու ազգերուն համար, որովհետեւ այդ տարին անոնց ազգային սկաուտական շարժումներուն առաջին քայլերը առնուելու սկսան, հայերու պարագային՝ Շաւարշ Քրիշեանի, Գրիգոր Յակոբեանի, Գարլօ Շահինեանի եւ Յովհաննէս Հինդլեանի ձեռամբ, մինչ Արժանքինի համար՝ Փերիթօ Ֆրանսիսքօ Փ. Սորենոյի կողմէ: Մինչեւ օրս, սկաուտական զոյգ շարժումները երկար ճանապարհ կտրած են՝ յաղթահարելով ընկերային, քաղաքական եւ տնտեսական խոչընդոտներ, սակայն միշտ հաւատարիմ մնալով սկաուտական շարժումի սկզբունքներուն:

Այս առիթով տեղի ունեցաւ սկաուտական փողկապներու փոխանակման արարողութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» (Պուէնոս Այրէս) եւ «Արագած» (Գորտոպա) սկաուտական խումբերուն կողմէ Պուէնոս Այրէսի Սկաուտական Տան նուիրուեցան խոհանոցային սարքեր: Իր կարգին, Արժանքինի սկաուտական վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Խորհուրդի առաջարկին ի պատասխան, իր պատրաստակամութիւնը յայտնեց Ազգային Համայնքներու Համախմբումի մը ստեղծման:

Հ.Մ.Ը.Մ.ի Հարավային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդը երջանկութեամբ կ'ոգեկոչէ զոյգ 100-ամեակները, իր առօրեային մէջ միշտ բարձր պահելով սկաուտութեան հայկական դրօշը:

Երջանիկ 100-ամեակ հայկական սկաուտութեան եւ երջանիկ 100-ամեակ Արժանքինի սկաուտութեան:

Հայ եւ արժանքներու սկաուտական յարաբերութիւններու ամրապնդման իբրեւ հետեւանք, Ար-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

րով տեղափոխուեցաւ հայրենիք, ուր հայ երիտասարդութեան դաստիարակման իմաստով մեծ գործ յառաջ տարաւ, ինչ որ արժանացաւ նոյնիսկ Պէյտըն Փառուրջի գնահատանքին: Փառուրջ այս մասին վկայած է. «Կ'անդրադառնամ թէ այս հայ երիտասարդները սկառուտական հոգիով ներշնչուած են, եւ անոնց «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանը իրական պատգամ մըն է, որ կրնան նկատի ունենալ որեւէ երկրի սկառուտներ:

«Հայ սկառուտութիւնը իր առաջին 100-ամեակը տօնեց հայրենիքի մէջ, Արարատ լեռան դիմաց կազմակերպուած տօնակատարութիւններով, որոնց մասնակցեցան 16 երկիրներէ աւելի քան 200 սկառուտներ, խօսելով տարբեր լեզուներ, սակայն բոլորը նոյն հոգիով, եռանդով, ուրախութեամբ ու սկրզբունքներով: Թէեւ ճանապարհը եղած է երկար ու դժուար, սակայն աշխատանքը կը շարունակուի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամներուն թիւը այսօր կրկնապատուած է, ըստ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ Համաշխարհային ըՍկառուտական Շարժումի Բիւրօյի անդամ եղբ. Բագրատ Եսայեանի:

«Ժողովրդային իմաստութիւնը ոսկեայ օրէնք մը կ'ըսէ, թէ՛ «մեծ գործու-



նէութիւնները մեծ մարդոց համար են»:
Այս օրէնքին համաձայն գործած են Համաշխարհային Սկառուտական Շարժումը երազողներն ու ստեղծողները՝ լորտ Պէյտըն Փառուրջ, արժանթինցի Ֆրանսիսքօ Փ. Մորէնօ, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներէն Շաւարշ Գրիսեան, Գրիգոր Յակոբեան, Յովհաննէս Հինդլեան եւ ուրիշներ, որոնց այսօր կը պատուենք ջերմ ու անկեղծ մեծարանքով, եւ մեր խոստումը իրականութիւն դարձնելու այն յոյսով, որ հայ ազգի խորհրդանիշ մեր սուրբ Արարատ լեռը օր մը նաեւ վերադառնայ հայրենիք, ուր աշխարհի բոլոր հայերս կը հաւաքուինք իր շուքին տակ...»:

Երրորդ տեսերիզը անդրադարձաւ սկառուտութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն, որոնք տեղի ունեցան Մար Տէլ Փլաթա քաղաքին եւ Հայաստանի Բիւրականի բանակավայրին մէջ:

Սկառուտական կեանքի ուրախութիւնն ու երգերը եւս ներկայ եղան այս տօնակատարութեան: Յատկապէս կազմուած նուագախումբ մը, որուն մաս կազմեցին Լուիս Օթերօ (հարմօնիք), Թօնի Ափիկեան (տհոլ) եւ Արմէն Աքալինօ (երգեհոն), ինչպէս նաեւ Կլէնտա Աճէմեանց երգով, ներկայացուցին անցեալի եւ ներկայի երգեր:





Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Այդ գիշերը հաւաքուողները ինչո՞ւ եկած էին, որո՞ւ համար եկած էին, միայն ճաշելու ու երաժշտութիւն ունկնդրելու, վստահաբար՝ ոչ... անոնք ընդառաջած էին Հ.Մ.-Ը.Մ-ի կանչին:

Շաբաթ, 12 Յունուար 2013. տօնական օրերը անցած էին, բայց հայկական միջնորդութիւն մէջ ուրախութիւնը շարունակելը այլ հաճոյք էր:

Փարիզի «Մարիոթ Ռիվ Կոչ» պանդոկի շքեղ սրահներէն մէկը ստացած էր այլ երանգ՝ Հ.Մ.-Ը.Մ. - «Ֆրանս»ի նշանը կրող պաստառներ թէ ցուցանակներ այլ բուրմունք մը տուած էին վայրին:

Հոս, անշուշտ, վարչութեան բծախնդիր մօտեցումն էր, որ կը ցցէր իր գլուխը, իւրաքանչիւր մանրամասնութիւն ուսումնասիրուած, պատահականութիւններէ հեռու դասաւորումները կայացած, պատրաստ ընդունելու իր բարեկամները, հաւատարիմները, անդամները:

Երեկոյին քոքթէյլը, որ կը ծառայէր ներկաներ ջերմ խօսակցութեան մղելու, կը պատրաստէր արդէն պարանցիկ երեկոյին մուտքը:




Գեղարուեստական յայտագիրը կարծէք «դրան առջեւ» կը սպասէր երեկոյին ներկաները: Զուլթակահար Ալեքսանտր Շիրինեան իր աղեղի գրաւիչ հարուածներով մատուցեց երաժշտական գեղեցիկ կտորներ, որուն արդիւնք՝ ընթրիքը դարձաւ աւելի հաճելի:

Վարչութեան բարի գալուստի խօսքը պիտի բանար երեկոյին պաշտօնական բաժինը:

Հ.Մ.-Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան իր խօսքին մէջ ծանրացաւ համակիրներու կողմէ միութեան ցուցաբերուած նեցուկին, ըլլայ ան նիւթական թէ բարոյական, նաեւ՝ անդրադարձաւ Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի մէջ այժմ տագնապալի օրեր ապրող Հ.Մ.-Ը.Մ-ին ու մասնաճիւղին զօրակցութիւնը յայտնեց անոր:

Իր կարգին, Կեղրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեան պատմական ակնարկ մը կատարեց Հ.Մ.-Ը.Մ-ի հիմնադրութեան, որուն 95-ամեակն է այս տարի: Եղբ. Սիսեռեան անդրադարձաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան մէջ, իբրեւ առաջին մարզական միութիւն, Հ.Մ.-Ը.Մ-ի կատարած դերին, որ «չտապեց հայրենիք»



աջակցելու օրուան կառավարութեան եւ օգնելու հայ երիտասարդներուն եւ որբերուն»: Եղբայրը մատնանշեց, թէ Առաջին Հանրապետութենէն ետք Հ.Մ.Ը.Մ-ը իր հետ Սփիւռք տարաւ հայրենիքի խորհրդանիշ՝ հայկական Եռագոյնը ու տէր կանգնեցաւ անոր: Իսկ 1991-ի անկախութենէն ետք Հ.Մ.Ը.Մ. կրկին վերադարձաւ հայրենիք ու հիմնեց Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր, միշտ տէր կանգնելով հայկական արժէքներու իր շարքերէն տուաւ նաեւ զոհեր՝ ի խնդիր հայրենիքի պաշտպանութեան: Եղբայրը իր խօսքը եզրակացուց շեշտելով, որ Հ.Մ.Ը.Մ-ը միշտ ազգանուէր, քաջ ու յանդուգն կեցուածքով օժանդակած է հայրենիքին եւ աջակցած է ու կ'աջակցի Հայաստանի հզօրացման ու բարգաւաճման:

Պարահանդէսը, ճիշդ է, խնճոյքի վայր է, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ կազմակերպուած ձեռնարկ մը նաեւ ազգային է, եւ կարելի չէ չըջանցել ազգային ու միութենական մտահոգութիւնները, որոնց թարգմանը հանդիսացան ամփոփ ձեւով իրենց սրտի խօսքը փոխանցող եղբայրները:

Հասած էր ժամը երգի ու պարի: Ատիս Հարմանտեանի





ղիւթեղ ձայնով երեկոյին ամբողջ ընթացքին աւելի քան 300 ներկաներ ապրեցան հաճելի պահեր:

Վիճակահանութիւն, նուիրատուութիւն, անակնկալներ ճոխացուցին երեկոն:

Ներկաներուն մէջ էր նաեւ անցեալի Հ.Մ.Ը.Մ-ական, այժմ Փրանսական բեմի ծանօթ դէմք, դերասան Սիմոն Աբգարեան, որ Հ.Մ.Ը.Մ-ականի իր խօսքը ուղղեց ա՛յն միութեան, որ զինք եւս դաստիարակած է:

Ինչպէս միշտ, ամէն սկիզբ ունի իր վերջը: Առաւօտեան ժամերը ներկաները իրարմէ բաժնեցին ուրախ տրամադրութեամբ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

Studio YEREN 2005 PARIS

ԱՆՁՐԵԻ

**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ**



Երկինքի ամպերու ձեւերը բազմազան են: Երբեմն անոնք կը յիշեցնեն բամպակի վիթխարի քուլաներ, իսկ երբեմն՝ ալիքներ: Երբեմն ալ երկինքը կը ծածկուի համատարած միապաղաղ գորշ շղարշով եւ այդ պահուն արեւուն ճառագայթները կը մարին:

Ամպերը ջուրի կաթիլներ են եւ սառույցէ բիւրեղիկներ: անոնք կը սկսին տեղալ երկրին վրայ՝ այն ժամանակ, երբ բաւական մեծնան: Այնքան ատեն որ ամպը միայն մանր կաթիլներէ բաղկացած է, օդին վերընթաց հոսանքները չեն ձգեր, որ կաթիլները թափին:

Կաթիլները կը մեծնան երկու ձեւով: Առաջինը՝ երբ ջուրի մանր կաթիլներուն մէջ «կը նստին» ջրային գոլորչի մասնիկներ, այլ խօսքով՝ երբ ամպին մէջ կը կատարուի ջրային խտացման ընթացք: Երկրորդ՝ երբ առանձին կաթիլներ ամպին մէջ բոլոր ուղղութիւններով շարժելով յաճախ իրարու կը բախին եւ իրարու կը միաձուլուին:

Անշուշտ, երկու ձեւերն ալ միշտ անձրեւ չեն պատրաստեր: Եթէ ամպը բաղկացած է միայն ջուրի կաթիլներէ, կաթիլները շատ դանդաղ կը մեծնան: Անձրեւի կաթիլ մը յառաջացնելու համար հարկ է, որ միաձուլուին առնը-լազն մէկ միլիոն մանր կաթիլներ:



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԱՆՁՐԵՒԻ ՄԱՍԻՆ

- Թ ա յ Լ է ն տ ի մէջ միայն գիշերը կ'անձրեւէ:
- Միացեալ Նահանգներու մէջ
- Անապատին մէջ կրնանք անձրեւուն տակ կենալ ու չթրջուիլ: Ինչո՞ւ որովհետեւ անապատին մէջ անձրեւի կաթիլները հողին չեն հասնիր եւ օդին մէջ կը գոլորչիանան:

կայ Ուլանպէրկ անունով քաղաք մը, ուր հարիւր տարիէ ի վեր, առանց ընդմիջումի, Յունիս 29-ին կ'անձրեւէ:

● Ուկանտայի մէջ, տարին 250 անգամ ամպրոպ ու անձրեւ կու գայ: Մինչդեռ Պոթցուլանայի մէջ հազուադէպօրէն անձրեւ կը տեղայ:





ՀՈՎԱՆՈՑ

Հովանոցը գոյութիւն ունեցած է հինէն ի վեր: Առաջին անգամ չինացիք պատ-

րաստած են հովանոցներ: Սկզբնական շրջանին, միայն թագաւորներ եւ փարաւոններ իրաւունք ունեցած են հովանոցներ գործածելու: Օրին, հովանոցները գործածուած են շատ բաներու համար, բայց ոչ՝ անձրեւէն պաշտպանուելու: Հիմնականին մէջ, անոնք ծառայած են արեւէն պաշտպանուելու համար: Միացեալ Նահանգներու մէջ, հովանոցը օգտագործած են որպէս պաշտպանական միջոց, բայց ոչ անձրեւներէն այլ՝ մարդկային յարձակումներէ: Այսպէս շարունակուած է



մինչեւ 1750 թուական, մինչեւ որ խելացի անգլիացի մը հասկցած է, որ գայնկարելի է գործածել նաեւ անձրեւէն պաշտպանուելու համար: Զէ՛ որ Անգլիա անձրեւներ շատ կը տե-

ղան:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Ոչ թուխպ է, ոչ՝
ամպ,
Բայց քու փափաքովդ,

Քու ուզած տեղդ,
Անձրեւ կը թափէ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ թիւին պատասխանն էր ցորեն):

ԵՐԲ ՍԿՍԱԾ ԵՆ ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Եղանակի տեսութեան մասին ձայնասփիւռէն հաղորդումներ կը սկսին ներկայացուիլ, երբ օր մը ձայնասփիւռի կայանի մը տնօրէնը կը մնայ անձրեւի տակ: Գրասենեակ հասնելով, ան կ'որոշէ յատուկ յայտագիր մը ստեղծել՝ եղանակի տեսութեան համար:



ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾՈՒԱԾ Է ՏԱՐՑ ԽԱՂԸ

Տարց խաղը ստեղծուած է անձրեւի պատճառով: Անգամ մը, նետաձիգներու մրցումներու ժամանակ սաստիկ անձրեւ կը տեղայ: Նետաձիգները կ'որոշեն գարեջրատուն երթալ եւ սպասել մինչեւ որ անձրեւը դադրի: Մինչ այդ, անոնք կը կարճեցնեն նետերը եւ կը սկսին հարձակուել պատին վրայ նշանակուած թիրախին:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

2			9				1
	8		4		3		9
	6	9				7	8
7				2			8
	9	3				6	5
	2			5			3
		8				4	
	3		8		2		1
6				4			3

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուելով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

5	8	7	3	6	9	2	1	4
2	1	6	4	7	5	3	9	8
4	3	9	8	2	1	7	5	6
7	5	3	2	1	6	4	8	9
6	2	8	9	5	4	1	3	7
9	4	1	7	3	8	5	6	2
1	6	4	5	9	7	8	2	3
3	7	5	6	8	2	9	4	1
8	9	2	1	4	3	6	7	5

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Ֆորմիլա 1»-ի սպանացի մրցավարորդ:
2. Լիպիոյ վերջին թագաւորը - Հնդկաստանի ահաբեկեալ վարչապետներէն:
3. Առատ - Բնակուած վայրեր - Ստացական ածական:
4. Անձնական դերանուն - Ճաղատ դառնալ:
5. Դժուար, տաժանելի - Յանդիմանութիւն:
6. «Գեղեցիկ» կոչուած նահապետը - Չայնանիչ - Մորթէ շինուած պարկ:
7. Բուսական կապոյտ ներկանիւթ - Կիլիկեան քաղաք:
8. Անտառային թռչնազգի:
9. Պարտիզպանի գործիքներէն - Դրկից գիրեր:
10. Երկբարբառ մը - Նիհար - Կրկին:
11. Ժխոր - Անորոշ դերանուն:
12. Լեռնաշղթայ - Նորէն, դարձեալ:
13. Կրկնուած բաղաձայններ - Ռուս թենիսվումբն:
14. Ելեւմտական գործառնութեանց կեդրոն - Քողագերծելու:
15. Այբուբենէն - Շողակ - Փտուլթիւն:
16. Խումբ - Հայկական «մայր գետ»:
17. Ճօշան - Դահլիճ - Ռուսերէն՝ այո՛:
18. Իգական օտար անուն - Էական բայէն:
19. 1001 եկեղեցիներու քաղաքը - Անգլիացի թենիսմէն:
20. Փոթ - Թել մանելու ձեռային գործիք:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. «Էն. Պի. Էյ.»-ի կազմերէն - Տնկելի ոստ:
2. Յետմիջօրէ - Արաբական երկիր - Յուցական ածական:
3. Չայնակից տառեր - Ական - Մանրորջիլ:
4. Ամերիկեան համանուն գետ եւ ջրվէժ - Բորբոքում - Ռամկորէն՝ այո՛:
5. Հիւրընկալ - Ներսէս Շնորհալիի հայրը - Որ:
6. Իգական օտար անուն - Նուագ - Փակցնող նիւթ:
7. Հսկայ - Վագգէն Շուշանեանի երկերէն՝ «... գիշերներ» - Կեղտ:
8. ԴԷՆ - Իգական անուն:
9. Աշխարհացոյց քարտէսներ - Գերմանահայ կուփամարտիկ:
10. Լեցուն - Տախտակի շերտ - Համագասական շողկապ - Կազմածք - Փոքրացրնող մասնիկ:
11. Սեւ ազուալ - Թայլէնտի նախկին անունը - Հորվակերտ մասնիկ - Անասունի մագ:
12. Թաց, խոնաւ - Շուշանազգի ծաղիկ - Սամարիա քաղաքի հիմնադիր թագաւորը:
13. Սիրային փափաք - Պաղիլ - Կանացի օտար շաբաթաթերթ:
14. Էական բայէն - Տառի մը դրացիները - Այբուբենէն:
15. Միջուկը դժուար ելլող (ընկոյզ) - Աղուամագ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 205 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ



Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒԲՃ ՀԱՄՈՒՏ 78 ՏԱՐԵԿԱՆ



photo by Ashnag©